

|                     |   |                                 |                            |             |
|---------------------|---|---------------------------------|----------------------------|-------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                 | <b>Կոնֆիդենցիալ</b>        |             |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Սմասթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>1/39</i> |

**Առարկան**

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ»-ով /այսուհետ՝ Կարգ/ սահմանվում են «Կոնվերս Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) կողմից Հաշվի Օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության» կանոնների համաձայն և «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ հետ կնքած պայմանագրի (պայմանագրերի) շրջանակներում նշված կանոններով Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից իրականացվող գործառնությունների միջնորդավորման կարգը:

**Կիրառման ոլորտը**

Կարգը կիրառվում է Բանկի Հաշվապահական հաշվառման վարչության կողմից:

**Առնչվող փաստաթղթեր**

«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններ»  
 «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ «Սակագների մասին կանոններ»  
 «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ «Արժեթղթերի միջազգային տարբերակիչ և նույնականացնող ծածկագրերի շնորհման կարգ»  
 Բանկի Խորհրդի որոշումներ  
 Բանկի Վարչության որոշումներ  
 Գործադիր տնօրենի հրամաններ  
 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների սակագներ և դրույքներ»

**Հապավումներ**

ՀՕ - Հաշվի օպերատոր  
 ԿՇՀՀԱ - Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամ  
 ԿՇ - Կարգավորվող շուկա  
 ՀԿԴ - «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ  
 ՀՍԳ  
 ՀԿ - Հաշվարկային կենտրոն  
 ԱՄՏԾ – Արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիր  
 ԱՆԾ – Արժեթղթերի նույնականացնող ծածկագիր

**Հավելվածներ**

|   |                   |
|---|-------------------|
| Ընթացիկ գործունեության ստուգման արդյունքների մասին հաշվետվություն                           | <b>Հավելված 1</b> |
| Հիմնական տվյալների վերաբերյալ տեղեկանք  | <b>Հավելված 2</b> |
| Սեփականատիրոջ արժեթղթերի հաշվի բացման (տվյալների փոփոխության) հանձնարարական (ֆիզիկական անձ) | <b>Հավելված 3</b> |

|                     |   |                                  |                            |             |
|---------------------|---|----------------------------------|----------------------------|-------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                  | <b>Կոնֆիդենցիալ</b>        |             |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Ստանաթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>2/39</i> |

|  |                    |
|--|--------------------|
| Լիազորված ներկայացուցչի քարտ (ֆիզիկական անձ)   | <b>Հավելված 4</b>  |
| Լիազորված ներկայացուցչի քարտ (իրավաբանական անձ)  | <b>Հավելված 5</b>  |
| Արժեթղթերի սեփականատիրոջ (անվանատիրոջ) քարտ (իրավաբանական անձ)   | <b>Հավելված 6</b>  |
| Սեփականատիրոջ/անվանատիրոջ արժեթղթերի հաշվի բացման (տվյալների փոփոխության) հանձնարարական (Իրավաբանական անձ) | <b>Հավելված 7</b>  |
| Համակարգից տեղեկությունների ստացման դիմում /ֆիզիկական անձ/   | <b>Հավելված 8</b>  |
| Համակարգից տեղեկությունների ստացման դիմում / իրավաբանական անձ/   | <b>Հավելված 9</b>  |
| Ազատ առաքմամբ արժեթղթերի փոխանցման հանձնարարական (ST)  | <b>Հավելված 10</b> |
| «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով արժեթղթերի փոխանցման հանձնարարական (DVP)                                | <b>Հավելված 11</b> |
| «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով արժեթղթերի ձեռք բերման հանձնարարական (DVP)                              | <b>Հավելված 12</b> |
| «Ազատ առաքում համաձայնությամբ» սկզբունքով արժեթղթերի փոխանցման հանձնարարական (FOP)                         | <b>Հավելված 13</b> |
| «Ազատ առաքում համաձայնությամբ» սկզբունքով արժեթղթերի ձեռք բերման հանձնարարական (FOP)                       | <b>Հավելված 14</b> |
| Արժեթղթերի գրավադրման հանձնարարական  | <b>Հավելված 15</b> |
| Արժեթղթերի գրավադրման դադարեցման հանձնարարական   | <b>Հավելված 16</b> |
| Արժեթղթերի հաշվի սառեցման հանձնարարական  | <b>Հավելված 17</b> |
| Արժեթղթերի հաշվի ապաստեցման հանձնարարական  | <b>Հավելված 18</b> |
| Համասեփականատերերի ցանկ  | <b>Հավելված 19</b> |
| Արժեթղթերի պորտֆելի փոխանցման հանձնարարական  | <b>Հավելված 20</b> |

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Կարգում օգտագործվող հիմնական հասկացությունները
- 1.2. Կարգով սահմանված ծառայությունների Հաճախորդները
- 1.3. Կարգի ուժի մեջ մտնելը և ուժը կորցնելը

### ԲԱԺԻՆ 2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

- 2.1. Համակարգի ծրագրային մոդուլը

### ԲԱԺԻՆ 3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

- 3.1. Գործունեության ընդհանուր սկզբունքները
- 3.2. ՀՕ-ի կարգավիճակով իրականացվող գործունեության սկզբունքները
- 3.3. ԿՇՀՀԱ-ի կարգավիճակով իրականացվող գործունեության սկզբունքները

### ԲԱԺԻՆ 4. ԿԱՐԳՈՎ ՄԱՀՄԱՆՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 4.1. Արժեթղթերի պահառությունը

|                     |   |                                 |                            |             |
|---------------------|---|---------------------------------|----------------------------|-------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                 | <b>Կոնֆիդենցիալ</b>        |             |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Անսաթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>3/39</i> |

4.2. ԿՇ-ում կորպորատիվ արժեթղթերով գործարքների կնքման նպատակով հանձնարարականների կատարումը

**ԲԱԺԻՆ 5. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- 5.1. Պետական պարտատոմսերի պահառության ընդհանուր սկզբունքները
- 5.2. Պետական պարտատոմսերով գործառնությունների վերաբերյալ տեղեկանքների, քաղվածքների, հաշվետվությունների տրամադրումը

**ԲԱԺԻՆ 6. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԵՆԹԱՊԱՀԱՌՈՒԹՅՈՒՆԸ**

**ԲԱԺԻՆ 7. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

Բանկի կողմից ՀՕ-ի և ԿՇՀՀԱ-ի կարգավիճակներով մատուցվող ծառայություններն են՝

**Հիմնական ծառայությունները.**

- Արժեթղթերի պահառությունը;

- ԿՇ-ում կորպորատիվ արժեթղթերով գործարքների կնքման նպատակով հանձնարարականների կատարումը:

Ծառայությունների մատուցման պայմանները սահմանվում են Կարգով, Բանկի և հաճախորդի միջև կնքված համապատասխան ծառայությունների մատուցման պայմանագրերով (Հավելված 1):

**1.1. Կարգում օգտագործվող հիմնական հասկացությունները**

1.1.1. Կարգում կիրառվող հասկացություններն (ներկայացված են այբբենական կարգով) ունեն հետևյալ նշանակությունը՝

1.1.1.1. «Ազատ առաքում՝ համաձայնությամբ կամ FOP փոխանցում՝ Արժեթղթերի մի հաշվից մյուսին արժեթղթերի փոխանցման տեսակ, որի դեպքում պահանջվում են և փոխանցող, և ստացող կողմերի համապատասխանաբար փոխանցման և ստացման հանդիպակաց հանձնարարականներ,

1.1.1.2. «Ազատ առաքում կամ ST փոխանցում՝ Արժեթղթերի մի հաշվից մյուսին արժեթղթերի փոխանցման տեսակ, որի դեպքում չի պահանջվում ստացող կողմից հաստատում կամ համաձայնություն,

1.1.1.3. «Ամբողջական ապահովվածությամբ վերջնահաշվարկ»՝ Վերջնահաշվարկի իրականացման եղանակ, որի դեպքում ԿՇՀՀԱ-ի անդամները իրավունք ունեն ԿՇ-ում գործարքներ կնքել միայն արժեթղթերի և դրամական միջոցների այնպիսի քանակության սահմաններում, որոնք նրանց կողմից Կարգով նախապես սահմանված եղանակով հաշվեգրվել են համապատասխանաբար դրամի առևտրային հաշվին և/կամ արգելադրված են համապատասխան արժեթղթերի հաշիվներում,

1.1.1.4. «Անվանատեր»՝ Անձ, որի անունով, առանց սեփականության իրավունքի փոխանցման, հաշվառվում են այլ անձանց պատկանող անվանական արժեթղթերը,

1.1.1.5. «Առաքում վճարման դիմաց կամ DVP փոխանցում»՝ Արժեթղթերի մի հաշվից մյուսին արժեթղթերի փոխանցման տեսակ, որի դեպքում պահանջվում են և փոխանցող, և ստացող կողմերի համապատասխանաբար փոխանցման և ստացման հանդիպակաց հանձնարարականներ, ինչպես նաև DVP փոխանցման համար իրավասու դրամական հաշվից

|              |  |                         |                    |      |
|--------------|--|-------------------------|--------------------|------|
| ConverseBank | «Կոնվերս Բանկ» ՓԲԸ   | PR 72-07                | Կոնֆիդենցիալ       |      |
|              | Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ | Ստանդիվ<br>22.05.2017թ. | Խմբագրություն<br>2 | 4/39 |

փոխանցված և ՀԿԴ-ի առևտրային հաշվին առկա DVP փոխանցման արդյունքում վերջնահաշվարկի ապահովման միջոց հանդիսացող դրամական միջոցների առկայություն,

1.1.1.6. «Առաքում վճարման դիմաց կամ DVP փոխանցում իրականացնելու համար իրավասու դրամական հաշիվ»՝ ՀՕ-ին պատկանող դրամական միջոցների հաշիվ, որից միայն կարող է իրականացվել DVP փոխանցման նպատակով դրամական միջոցների փոխանցումը առևտրային հաշվին և որի վրա միայն կարող են փոխանցվել DVP փոխանցմամբ վերջնահաշվարկի իրականացման արդյունքում առաջացած դրամական միջոցները առևտրային հաշվից,

1.1.1.7. «Առևտրային արգելադրում»՝ Գործառնություն, որի արդյունքում ԿՇ-ում առևտուր իրականացնելու համար նախատեսված արժեթղթերի փոխանցումն արգելվում է որոշակի ժամանակահատվածում կամ մինչև այդ արժեթղթերով ԿՇ-ում կնքված առուվաճառքի գործարքների վերջնահաշվարկի կատարումը, որը հանգեցնում է այդ արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցմանը,

1.1.1.8. «Առևտրային արգելադրման դադարեցում»՝ Գործառնություն, որի արդյունքում ԿՇ-ում առևտուր իրականացնելու համար նախատեսված և արգելադրված արժեթղթերը հանվում են արգելադրումից,

1.1.1.9. «Առևտրային հաշիվ»՝ ՀՀ Կենտրոնական բանկում՝ ՀԿԴ-ի անունով որևէ արժույթով բացված հաշիվ, որը նախատեսված է տվյալ առևտրային օրվա ընթացքում ՀՕ-ի կամ ԿՇՀՀԱ-ի և/կամ նրա հաճախորդի այն դրամական միջոցների փոխանցման համար, որոնցով կապահովվի ԿՇ-ում կամ դրանից դուրս արժեթղթերով կնքված գործարքների վերջնահաշվարկը կամ որոնցով կապահովվի շահութաբաժինների, արժեկտրոնների կամ պարտատոմսերի մարմանն ուղղված դրամական միջոցների վճարումների իրականացումը,

1.1.1.10. «Առևտրային նստաշրջան»՝ Առևտրային օրվա ժամանակահատված, որի ընթացքում իրականացվում է արժեթղթերի առևտուր ԿՇ-ում,

1.1.1.11. «Առևտրային օր»՝ Աշխատանքային օր, որի ընթացքում ԿՇ-ում իրականացվում է արժեթղթերի առևտուր,

1.1.1.12. «Արժեթղթերի հաշիվ»՝ ՀԿԴ-ի կողմից վարվող գրառումների ամբողջություն՝ հաշվետիրոջ, հաշվետիրոջ հաշվում հաշվառվող արժեթղթերի, այդ արժեթղթերի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների, արժեթղթերի հաշվառման ընդունման և գրառումների կատարման ժամկետների և ՀԿԴ-ի կողմից սահմանված այլ տեղեկությունների վերաբերյալ,

1.1.1.13. «Արժեթղթերի փոխանցումներ»՝ Հաշվետիրոջ արժեթղթերի հաշվից և/կամ հաշվին արժեթղթերի փոխանցում ՀԿԴ-ի մոտ բացված արժեթղթերի հաշվին և/կամ հաշվից,

1.1.1.14. «Արժեթղթերի պորտֆելի փոխանցում կամ պորտֆելի փոխանցում»՝ Արժեթղթերի մի հաշվից մյուսին արժեթղթերի փոխանցման տեսակ, որի արդյունքում արժեթղթերի հաշվին առկա արժեթղթերի ամբողջ պորտֆելի փոխանցումն իրականացվում է փոխանցման մեկ գործառնության գրանցմամբ,

1.1.1.15. «Արժեթուղթ»՝ Բաժնային և ոչ բաժնային անվանական արժեթղթեր;

1.1.1.16. «Գործառնություն»՝ Համակարգում արժեթղթի Հաշվետիրոջ, հանձնարարականի հիման վրա իրականացվող գործողություն, որի արդյունքում տեղի է ունենում արժեթղթերի

|                     |   |                                 |                            |             |
|---------------------|---|---------------------------------|----------------------------|-------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                 | <b>Կոնֆիդենցիալ</b>        |             |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Ամսաթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>5/39</i> |

հաշվի բացում, արժեթղթերի հաշվում առկա տեղեկությունների փոփոխություն, արժեթղթերի հաշվի փակում, արժեթղթերի հաշվում գրանցված արժեթղթերի մնացորդի փոփոխություն;

**1.1.1.17. «Գործարքի կնքում»**` Առևտրային նստաշրջանի ընթացքում ԿՇՀՀԱ-ների միջև ԿՇ-ի օպերատորի կանոններով սահմանված կարգով արժեթղթերի առուվաճառքի էական պայմանների վերաբերյալ համաձայնության կայացում,

**1.1.1.18. «Զուտացում»**` Միևնույն առևտրային նստաշրջանում կնքված գործարքներից բխող պահանջների և պարտավորությունների հաշվանցման հետ կապված ԿՇՀՀԱ-ի և նրա հաճախորդների զուտ պարտավորությունների և/կամ պահանջների որոշման գործընթաց, որի արդյունքում ԿՇ-ի հաշվարկային համակարգի յուրաքանչյուր անդամի և/կամ նրա հաճախորդի մոտ ՀԿԴ-ի հանդեպ առաջանում է միայն`

ա) մեկ զուտ դրամական պահանջ և/կամ զուտ դրամական պարտավորություն,

բ) յուրաքանչյուր արժեթղթի մասով մեկ զուտ արժեթղթային պահանջ և/կամ զուտ արժեթղթային պարտավորություն:

**1.1.1.19. «Էլեկտրոնային եղանակով առաքված փաստաթուղթ»**` ՍԻԲԻԷՆԵԹ միջբանկային համակարգչային ցանցի հիման վրա գործող Լոտուս համակարգի էլեկտրոնային փոստով (այսուհետ` ՍԻԲԻԷՆԵԹ համակարգչային ցանցով) կամ իրավասու այլ էլեկտրոնային հասցեով կամ ՀՀ Կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգով (այսուհետ` էլեկտրոնային վճարումների համակարգով) առաքված փաստաթուղթ: ՍԻԲԻԷՆԵԹ համակարգչային ցանցով ուղարկված փաստաթուղթը պետք է պարտադիր օժտված լինի փաստաթղթի առաքումը և ստացումը հաստատող անդորրագրերը ստանալու հնարավորությամբ, պաշտպանված լինի էլեկտրոնային ստորագրությամբ և ծածկագրումով: Այն վավեր է և հավասարագոր է թղթային փաստաթղթին, եթե այն օժտված է ուղարկող կողմի էլեկտրոնային ստորագրությամբ և ուղարկվել է ստացող կողմի` ՍԻԲԻԷՆԵԹ համակարգչային ցանցի Լոտուս Դոմինո սերվերում գրանցված համապատասխան հասցեով:

**1.1.1.20. «Էլեկտրոնային իրավասու հասցե»**` Կենտրոնական բանկի ՍԻ ԲԻ ԷՅ ՆԵԹ ցանցում գրանցված կամ այլ էլեկտրոնային հասցե, որի մասին տեղեկատվությունը նշված է ՀԿԴ-ի և Համակարգի Անդամի միջև կնքված պայմանագրում,

**1.1.1.21. «Իրավասու դրամական հաշիվներ»**` ԿՇՀՀԱ-ին պատկանող դրամական միջոցների հաշիվներ, որոնցից միայն կարող է իրականացվել դրամական միջոցների փոխանցումը առևտրային հաշվին, և որոնց վրա փոխանցվում են ապադեպոնացված և ԿՇ-ում կնքված գործարքների վերջնահաշվարկի իրականացման արդյունքում առաջացած դրամական միջոցները. ԿՇՀՀԱ-ը առևտրային բանկ լինելու դեպքում իրավասու դրամական հաշիվները վարվում են վերջինիս կողմից, իսկ ԿՇՀՀԱ-ը առևտրային բանկ չլինելու դեպքում իրավասու դրամական հաշիվները վարվում են Հաշվարկային գործակալի կողմից,

**1.1.1.22. «Ծրագրային համակարգ»**` ՀԿԴ-ում օգտագործվող այն ծրագրերի ամբողջությունը, որոնց միջոցով իրականացվում են ռեեստրի վարման, պահպանման և պահառության գործառույթները,

**1.1.1.23. «ԿՇ»**` ԿՇ-ի օպերատորի կողմից կազմակերպվող շուկա,

**1.1.1.24. «ԿՇ-ի օպերատոր»**` «ՆԱՍԴԱՔ ՕԷՍԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» բաց բաժնետիրական ընկերություն,

|                     |   |                                 |                            |             |
|---------------------|---|---------------------------------|----------------------------|-------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                 | <b>Կոնֆիդենցիալ</b>        |             |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Ամսաթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>6/39</i> |

1.1.1.25. «ԿՇ-ում արժեթղթերի տեղաբաշխման համակարգ»՝ Էլեկտրոնային եղանակով ԿՇ-ի օպերատորի կողմից առևտրի կազմակերպման համար ԿՇ-ում օգտագործվող առևտրային համակարգի և դրա մաս կազմող և արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման համար օգտագործվող ծրագրային մոդուլի ամբողջություն, որը նախատեսված է ԿՇ-ում արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման, անցկացման և դրա հետ կապված տեղեկատվության մշակման և պահպանման, ինչպես նաև ԿՇ-ի օպերատորի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններ»ով սահմանված այլ գործառույթների իրականացման համար,

1.1.1.26. «Կենտրոնական բանկ»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,

1.1.1.27. «Կենտրոնացված քլիրինգ»՝ Քլիրինգի իրականացման եղանակ, որի դեպքում ՀԿԴ-ն դառնում է արժեթղթերով կնքված գործարքների հակադարձ կողմը՝ կրելով նրանց բոլոր պարտականությունները և ձեռք բերելով նրանց բոլոր իրավունքները՝ կապված ԿՇ-ում կնքված գործարքների հետ,

1.1.1.28. «ԿՇՀՀԱ»՝ - Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամ

1.1.1.29. «Համակարգ»՝ Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգ,

1.1.1.30. «Համակարգի Անդամ»՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված անձ, որը ՀԿԴ-ի հետ կնքած պայմանագրի համաձայն՝ ստացել է Համակարգի Անդամի համապատասխան կարգավիճակ,

1.1.1.31. «Հանձնարարական/Հանձնարարագիր»՝ Համակարգում գործառնություններ (բացառությամբ տեղեկությունների տրամադրման) կատարելու համար հիմք հանդիսացող փաստաթուղթ,

1.1.1.32. «Հաճախորդ»՝ Անձ, որի հետ Բանկն ունի ծառայությունների մատուցման գործող պայմանագիր,

1.1.1.33. «Հաճախորդի դրամական միջոցների հաշիվ»՝ Հաշվարկային գործակալի մոտ ԿՇՀՀԱ-ի անունով որևէ արժույթով բացված հաշիվ, որտեղ հաշվառվում են վերջինիս հաճախորդների դրամական միջոցները,

1.1.1.34. «Հաշվառման ամսաթիվ»՝ Ամսաթիվ, որի դրությամբ Հաշվետիրոջ անունը և ազգանունը (անվանունը) պետք է Թողարկողի ռեեստրում նշված լինի՝ իրեն պատկանող (իր անվամբ գրանցված) արժեթղթերով հավաստված իրավունքներն իրականացնելու համար,

1.1.1.35. «Հաշվարկային գործակալ»՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված բանկային գործունեության իրականացման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ, որի միջոցով իրականացվում են ՀՀ Կենտրոնական բանկում դրամային իրավասու հաշիվներ չունեցող Համակարգի Անդամների՝ ԿՇ-ում և դրանից դուրս արժեթղթերով կնքված գործարքների կամ դիվիդենդների, արժեկտրոնների վճարման, պարտատոմսերի մարման հետ կապված դրամական միջոցների փոխանցումները՝ Համակարգի Անդամի և Հաշվարկային գործակալի միջև կնքված պայմանագրերին համապատասխան,

1.1.1.36. «Հաշվետեր»՝ Անձ, որն ունի (որի անունով առկա է) Համակարգում բացված արժեթղթերի հաշիվ,

1.1.1.37. «ՀՕ»՝ Համակարգի Անդամ, որը ՀԿԴ-ի հետ կնքած պայմանագրի համաձայն՝ Հաշվետիրոջից կամ Թողարկողից ստացված հանձնարարականները և այլ տեղեկությունները (փաստաթղթերը) փոխանցում է ՀԿԴ-ին Համակարգում գործառնությունների կատարման



|                     |   |                                 |                            |             |
|---------------------|---|---------------------------------|----------------------------|-------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                 | <b>Կոնֆիդենցիալ</b>        |             |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Ամսաթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>7/39</i> |

համար, ինչպես նաև օրենքին, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերին և ՀԿԴ-ի հետ կնքված պայմանագրին համապատասխան միջնորդավորում է ՀԿԴ-ի կողմից մատուցվող ծառայությունները,

**1.1.1.38. «Հարցում»**՝ Համակարգից տեղեկությունների տրամադրման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ, ինչպես նաև այլ փաստաթղթեր, որոնք չեն կարող որակվել որպես հանձնարարական,

**1.1.1.39. «ՀԿԴ»**՝ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերություն,

**1.1.1.40. «Նախնական դեպոնացմամբ առևտուր»**՝ ԿՇ-ում իրականացվող առևտուր, որի համար նախատեսված դրամական միջոցները փոխանցվում են առևտրային հաշվին, իսկ արժեթղթերը ենթարկվում են առևտրային արգելադրման, որից հետո ԿՇ-ում կնքված գործարքների առնչությամբ ՀԿԴ-ի և ԿՇՀՀԱ-ների բոլոր գործողություններն ավարտվում են տվյալ առևտրային օրվա ընթացքում և գրանցվում արժեթղթերի հաշիվներում,

**1.1.1.41. «Նույնականացում»**՝ Հաճախորդի կամ նրա լիազորված ներկայացուցիչ նշված անձի վերաբերյալ որոշակի տեղեկությունների և Հաճախորդի, նրա լիազորված ներկայացուցչի կողմից Բանկ ներկայացված փաստաթղթերում պարունակվող որոշակի տեղեկությունների համադրման միջոցով անձի ինքնության հաստատման գործընթաց,

**1.1.1.42. «Շուկայական հապավում»**՝ 5 նիշ, որը շնորհվում է ԿՇ-ի օպերատորի կողմից ԿՇ-ում առևտրի մասնակցին,

**1.1.1.43. «Սեփական դրամական միջոցների հաշիվ»**՝ Հաշվարկային գործակալի մոտ ԿՇՀՀԱ-ի անունով որևէ արժույթով բացված հաշիվ, որտեղ հաշվառվում են վերջինիս սեփական դրամական միջոցները,

**1.1.1.44. «Վերջնահաշվարկ»**՝ Գործողություն, որի արդյունքում մարվում են դրամական միջոցների և արժեթղթերի փոխանցման հետ կապված Համակարգի Անդամների և/կամ նրանց Հաճախորդների և ՀԿԴ-ի միջև ծագած դրամական և արժեթղթային պարտավորությունները,

**1.1.1.45. «Քլիրինգ»**՝ ԿՇ-ում կնքված գործարքների արդյունքում ծագած՝ փոխադարձ պարտավորությունների որոշում և հաշվանցում (գործարքների վերաբերյալ տեղեկատվության հավաքում, ճշտում և հաշվարկային փաստաթղթերի պատրաստում),

**1.1.2.** Կարգում կիրառվող այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք), դրա հիման վրա ընդունված ՀՀ Կենտրոնական բանկի և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված նշանակություն:

**1.2. Կարգով սահմանված ծառայությունների Հաճախորդները**

- 1.2.1. Կարգի իմաստով Հաճախորդներ են համարվում.
  - 1.2.1.1. Արժեթղթերի հաշվի սեփականատերը (Հաշվետեր)
  - 1.2.1.2. Արժեթղթերի հաշվի անվանատերը (Ենթապահառու)

**1.3. Կարգի ուժի մեջ մտնելը և ուժը կորցնելը**

**1.3.1.** Կարգը հաստատվում, փոփոխվում և ուժը կորցրած է ճանաչվում Բանկի Վարչության կողմից և ուժի մեջ են մտնում Վարչության կողմից սահմանված ժամկետներում:

|                     |   |                                 |                            |             |
|---------------------|---|---------------------------------|----------------------------|-------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                 | <b>Կոնֆիդենցիալ</b>        |             |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Ամսաթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>8/39</i> |

**2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ**

**2.1. Համակարգի ծրագրային մոդուլը**

2.1.1. Կարգի շրջանակներում ծառայությունների մատուցման համար Բանկը ՀԿԴ-ից ստանում է Համակարգի ծրագրային մոդուլ՝ համաձայն «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններ»-ով սահմանված կարգի և ժամկետների:

2.1.2. Տրամադրված ծրագրային մոդուլից օգտվելու համար ՀԿԴ-ն Բանկին շնորհում է Համակարգի մուտքի ծածկագիր, որին տիրապետում է Կարգի շրջանակներում ծառայություններ մատուցող պահառուն:

2.1.3. Հեռացված տերմինալի միջոցով Համակարգին միանալու համար Բանկն առանձնացնում է առնվազն մեկ համակարգիչ՝ ապահովված ՍիԲիԷյՆԵթ համակարգչային ցանցին և ինտերնետին միանալու հնարավորությամբ:

2.1.4. Բանկը ՀԿԴ-ին տրամադրում է ՍիԲիԷյՆԵթ համակարգչային ցանցի և ինտերնետ ցանցի իրական IP հասցե՝ որպես Համակարգին միանալու համար նույնականացման միջոց, ընդ որում, ինտերնետ ցանցով Համակարգին միացումը ծառայում է որպես այլընտրանքային կապուղի, որը կօգտագործվի հիմնական կապուղու՝ ՍիԲիԷյՆԵթ համակարգչային ցանցի խափանման դեպքում:

2.1.5. ՀԿԴ-ն Բանկի կողմից առանձնացված համակարգչում տեղադրում է Համակարգին հեռացված տերմինալի միջոցով միանալու հնարավորություն տվող ծրագրային մոդուլը, որն ապահովելու է ՍիԲիԷյՆԵթ համակարգչային ցանցի կամ ինտերնետի միջոցով Համակարգին իրական ժամանակի ռեժիմում միանալու հնարավորությունը, և կատարում է դրա փորձարկումը:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ**

**3.1. Գործունեության ընդհանուր սկզբունքները**

3.1.1. Բանկը գործում է համաձայն ՀԿԴ-ի կողմից սահմանված կանոնների պահանջների, իր կողմից ՀԿԴ-ի հետ կնքած և գործող պայմանագրերի դրույթների և այլ համապատասխան նորմատիվ իրավական ակտերի:

3.1.2. Կարգի շրջանակներում Բանկն իր հաճախորդներին առաջարկում է, ինչպես նաև միջնորդավորում է ՀԿԴ-ի կանոններով սահմանված բոլոր ծառայությունները՝ ՀԿԴ-ի հետ կնքած պայմանագրով սահմանված իրավասությունների շրջանակում:

3.1.3. Բանկը սկսում է մատուցել ՀԿԴ-ի կանոններով սահմանված ծառայությունները՝ Համակարգի ծրագրային մոդուլը տեղադրվելուց 1 աշխատանքային օր հետո:

3.1.4. Բանկն իր ինտերնետային կայքի միջոցով շահագրգիռ անձանց տեղեկացնում է Համակարգում իր անդամության և Համակարգի կանոնների մասին՝ Համակարգի անդամության համապատասխան պայմանագրի կնքման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

3.1.5. Կարգով ծառայություններ մատուցելիս Բանկն իր հաճախորդներին տեղեկացնում է նրանց հանձնարարականների կատարման ընթացքի մասին:



|                     |   |                                 |                            |             |
|---------------------|---|---------------------------------|----------------------------|-------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                 | <b>Կոնֆիդենցիալ</b>        |             |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Ամսաթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>9/39</i> |

**3.1.6.** Բանկը հատուցում է իր հաճախորդների վնասները, որոնք առաջացել են պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և ՀԿԴ-ի կանոններով սահմանված պահանջների խախտումներով գործելու արդյունքում:

**3.1.7.** Բանկն ապահովում է բավարար տարածքային պայմաններ՝ հաճախորդների սպասարկման համար՝ հնարավորինս բացառելով հերթերն ու մարդկային կուտակումները, ներկայացված հանձնարարականները կատարում է ժամանակին և հնարավորինս շուտ՝ ըստ դրանց ներկայացման հերթականության, պահպանում է մասնագիտական էթիկայի և բարեխիղճ գործունեության վերաբերյալ ՀԿԴ-ի կողմից ընդունված կանոնները և չափանիշները, ապահովում և վերահսկում է դրանց կիրառումն իր ամենօրյա աշխատանքի ընթացքում: Բանկի ՀԿ-ն (այսուհետ նաև պահառուն) պետք է իր հաճախորդների հետ աշխատանքի ընթացքում հաշվի առնի ծառայությունների մատուցման հետ կապված հաճախորդների ցանկությունները և պահանջները:

**3.1.8.** Կարգով ծառայություններ մատուցող պահառուն մատուցվող ծառայությունների որակն ապահովելու նպատակով ձեռք է բերում համապատասխան որակավորում (առնվազն մասնակցում են ՀԿԴ-ի կողմից կազմակերպվող դասընթացներին):

**3.1.9.** Բանկի մատուցած ծառայությունների դիմաց Հաճախորդի կողմից վճարվող գումարը սահմանվում է Բանկի «Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների սակագներ և դրույքներ»-ի համաձայն:

**3.1.10.** Բանկը եռամսյակային կտրվածքով ՀԿԴ-ին ներկայացնում է իր ներքին աուդիտի կողմից լրացված Ընթացիկ գործունեության ստուգման արդյունքների մասին հաշվետվություն (Հավելված 2)՝ ընթացիկ գործունեության ստուգման արդյունքների վերաբերյալ, մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող 15-րդ աշխատանքային օրը ներառյալ: Բանկի կողմից հաշվետու եռամսյակի ընթացքում Կարգով սահմանված ծառայություններ չմատուցելու դեպքում Բանկը ՀԿԴ-ին գրավոր տեղեկացնում է այդ մասին՝ սույն կետով սահմանված ժամանակահատվածում:

**3.1.11.** Բանկը 3.1.10. կետով սահմանված հաշվետվությունը ՀԿԴ-ին է ներկայացնում նաև ընթացիկ գործունեության՝ վերը նշված հաշվետվությամբ սահմանված շրջանակներում տեղ գտած յուրաքանչյուր խախտման հայտնաբերման դեպքում, դրա հայտնաբերման պահից 5, իսկ խախտման վերացման դեպքում՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:

**3.1.12.** Բանկը ՀԿԴ-ի կողմից Համակարգի սպասարկմամբ պայմանավորված ծառայությունների մատուցման համար ՀԿԴ-ին վճարում է ՀԿԴ-ի «Սակագների մասին» կանոններով և ՀԿԴ-ի հետ կնքած պայմանագրով սահմանված կարգով:

**3.1.13.** Բանկը ոչ ուշ, քան 7 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է տեղեկացնել ՀՀ Կենտրոնական բանկին՝ ՀԿԴ-ի և Համակարգի Անդամի միջև կնքված պայմանագրի լրացումների և փոփոխությունների մասին:

**3.1.14.** Բանկը Համակարգում գործառնությունների գրանցումներն իրականացնում է ժամանակին, իր իրավասության շրջանակներում՝ Օրենքին, դրա հիման վրա ընդունված

|                     |   |                                 |                            |              |
|---------------------|---|---------------------------------|----------------------------|--------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                 | <b>Կոնֆիդենցիալ</b>        |              |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Ստանդիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>10/39</i> |

նորմատիվ իրավական ակտերին, ՀԿԴ-ի կանոններին, իր ներքին կանոններին և ՀԿԴ-ի հետ կնքած պայմանագրին համապատասխան:

**3.1.15.** Եթե որևէ ծառայության մատուցումը տեխնիկական պատճառներով դարձել է բարդ կամ անհնար, ապա Կարգով ծառայություններ մատուցող պահառուն անհապաղ տեղեկացնում է այդ մասին ՀԿԴ-ին և միաժամանակ անհրաժեշտ աշխատանքներ իրականացնում՝ տեխնիկական խնդիրը վերացնելու ուղղությամբ: Բանկը պահպանում է Համակարգում առկա տեղեկությունների գաղտնիությունը, ինչպես նաև ձեռնարկում է համապատասխան տեխնիկական և վարչական միջոցներ՝ Համակարգում առկա տեղեկությունները չթույլատրված օգտագործումից պաշտպանելու համար:

**3.2. ՀՕ-ի կարգավիճակով իրականացվող գործունեության սկզբունքները**

**3.2.1.** Համակարգում տեղեկությունների փոփոխությունները, գործառնությունների գրանցումները, ինչպես նաև տեղեկությունների տրամադրումը պետք է իրականացվի Բանկի ՀԿ-ի (պահառուի) կողմից:

**3.2.2.** Բանկը պահպանում է Համակարգում գրառման իրականացման համար հիմք հանդիսացած հանձնարարականները, հարցումները դրանք ստանալուց 10 տարվա ընթացքում:

**3.3. Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակով իրականացվող գործունեության սկզբունքները**

**3.3.1.** Բանկի իրավասու աշխատակիցը Համակարգ է մուտքագրում առևտրային նստաշրջանի ընթացքում գործարքների իրականացման համար անհրաժեշտ՝ Կարգով, Ծրագրային համակարգով նախատեսված հանձնարարականներ:

**3.3.2.** Բանկի իրավասու աշխատակիցը հանձնարարականները Համակարգ է մուտքագրում Կարգով սահմանված ժամկետներին համապատասխան:

**3.3.3.** ՀԿԴ-ի կանոններով սահմանված՝ տեղեկությունների յուրաքանչյուր փոփոխության դեպքում Բանկը կատարված փոփոխություն/ներ/ը ՀԿԴ-ին է ներկայացնում Հիմնական տվյալների վերաբերյալ տեղեկանքի Հավելված 2 տեսքով՝ ԿՇ-ում արժեթղթերով առևտրին մասնակցելուց առնվազն մեկ աշխատանքային օր առաջ:

**3.3.4.** Եթե ԿՇ-ում կնքված գործարքի վերջնահաշվարկի փուլում պարզվում է, որ Բանկին ավել դրամական միջոց է փոխանցվել, ապա Բանկն ապահովում է ավել փոխանցված միջոցի հետ փոխանցում ՀԿԴ-ի առևտրային հաշվին:

**4. ԿԱՐԳՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**4.1. Արժեթղթերի պահառությունը**

**4.1.1. Համակարգում բացվող արժեթղթերի հաշիվները և դրանց տեսակները**

**4.1.1.1.** Արժեթղթերի և դրանցով կատարված գործառնությունների հաշվառման համար ՀԿԴ-ի և Բանկի կողմից բացվող հաշիվները արժեթղթերի հաշիվներ են:

**4.1.1.2.** Համակարգում կարող են բացվել արժեթղթերի հաշիվների հետևյալ տեսակները.

1) Սեփականատիրոջ արժեթղթերի հաշիվ, որը բացվում է սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերը հաշվառելու նպատակով:

|              |  |                            |                    |       |
|--------------|--|----------------------------|--------------------|-------|
| ConverseBank | «Կոնվերս Բանկ» ՓԲԸ   | PR 72-07                   | Կոնֆիդենցիալ       |       |
|              | Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ | Ստանդարտիվ<br>22.05.2017թ. | Խմբագրություն<br>2 | 11/39 |

2) Անվանատիրոջ արժեթղթերի հաշիվ, որը բացվում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ պահառուների անունով այլ անձանց սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերը հաշվառելու համար:

3) Օտարերկրյա անվանատիրոջ արժեթղթերի հաշիվ, որը բացվում է օտարերկրյա պահառուների համար այլ անձանց սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերը հաշվառելու համար:

4) Թողարկողի արժեթղթերի հաշիվ, որում հաշվառվում են Թողարկողի տիրապետման տակ գտնվող (այդ թվում՝ ձեռքբերված կամ հետգնված) իր կողմից տեղաբաշխված արժեթղթերը:

5) Բաժնային սեփականության արժեթղթերի հաշիվը ընդհանուր սեփականության հաշիվ է, որտեղ հաշվառվում են այն արժեթղթերը, որոնք պատկանում են մեկից ավելի անձանց սահմանված բաժնային համամասնության սկզբունքով:

6) Համատեղ սեփականության արժեթղթերի հաշիվը ընդհանուր սեփականության հաշիվ է, որում հաշվառվում են այն արժեթղթերը, որոնք պատկանում են մեկից ավելի անձանց համատեղ սեփականության իրավունքով:

7) Գրավառուի գրավային հաշիվ, որը Ծրագրային համակարգում բացվում է արժեթղթերի գրավադրման գործառնությունը գրանցելու համար, եթե գրավատուն չի ներկայացնում գրավառուի ակտիվ կարգավիճակով սեփականատիրոջ արժեթղթերի հաշվի համարը կամ գրավառուն Համակարգում չունի ակտիվ կարգավիճակով սեփականատիրոջ արժեթղթերի հաշիվ,

8) Դեպո ենթահաշիվ, որը Ծրագրային համակարգում բացվում է սեփականատիրոջ արժեթղթերի հաշվի ներքո՝ պետական պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և դրանց սահմանափակումների հաշվառման համար,

9) Արժեթղթերի տեխնիկական հաշիվը ԿՇ-ում առևտրի նպատակով արգելադրված արժեթղթերի հաշվառման համար նախատեսված արժեթղթերի հաշիվ է: Այս հաշիվը բացվում է բացառապես ՀԿԴ-ի կողմից:

10) Դրամական վերջնահաշվարկի հաշիվ

4.1.2. Համակարգում բացված արժեթղթերի հաշիվը կարող է ունենալ հետևյալ կարգավիճակներից որևէ մեկը.

4.1.2.1. «Ժամանակավոր հաշվի կարգավիճակ» (այսուհետ՝ Արժեթղթերի ժամանակավոր հաշիվ) Բանկի կողմից դեռևս չվերաբացված, ինչպես նաև Թողարկողի կողմից ռեեստրի վարման պայմանագրի կնքման շրջանակներում ներկայացրած տվյալների (անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի) հիման վրա Համակարգում բացված արժեթղթերի հաշիվ: Ժամանակավոր հաշվով որևէ գործառնություն Բանկը կարող է իրականացվել Կարգով սահմանված դեպքերում:

4.1.2.2. «Չնույնականացված հաշվի կարգավիճակ» (այսուհետ՝ Արժեթղթերի չնույնականացված հաշիվ) տրվում է Բանկի կամ այլ ՀՕ-ի կողմից արժեթղթերի ժամանակավոր հաշվի վերաբացման գործառնության իրականացման ընթացքում չնույնականացված արժեթղթերի հաշվին:

|                     |   |                                 |                            |              |
|---------------------|---|---------------------------------|----------------------------|--------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                 | <b>Կոնֆիդենցիալ</b>        |              |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Ստանդիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>12/39</i> |

**4.1.2.3. «Ակտիվ հաշվի կարգավիճակ»** (այսուհետ՝ Արժեթղթերի ակտիվ հաշիվ) տրվում է Բանկի կամ այլ ՀՕ-ի կողմից բացված կամ վերաբացված (որը ենթադրում է նաև նույնականացված) և դրանում ներառված տվյալների փոփոխության ենթարկված հաշվին:

**4.1.2.4. «Ժառանգատուի հաշվի կարգավիճակ»** կարգավիճակ, որը տրվում է Բանկի կամ այլ ՀՕ-ի կողմից վերաբացված այն հաշվին. որից պետք է իրականացվի ժառանգության գրանցման արդյունքում արժեթղթերի փոխանցում ժառանգ հանդիսացող Հաշվետիրոջ արժեթղթերի հաշվին:

**4.1.3. Արժեթղթերի հաշվի բացումը**

**4.1.3.1.** Բանկի կողմից Հաշվետիրոջ համար արժեթղթերի հաշիվ կարող է բացվել հետևյալ 2 եղանակներից որևէ մեկով.

1) ՀԿԴ-ի կողմից բացված և ժամանակավոր հաշվի կարգավիճակ ունեցող արժեթղթերի հաշվի վերաբացմամբ, որը ենթադրում է նաև Կարգով սահմանված նույնականացում, եթե տվյալ անձը ՀԿԴ-ում ունի արժեթղթերի հաշիվ.

2) Արժեթղթերի նոր հաշվի բացմամբ:

**4.1.3.2.** Բանկն արժեթղթերի հաշվի բացման համար Հաշվետիրոջ հետ կնքում է «Արժեթղթերի Պահառության» գրավոր պայմանագիր՝ ֆիզիկական անձի դեպքում ինքնությունը հաստատող փաստաթղթի, իսկ իրավաբանական անձի դեպքում պետական գրանցումը հավաստող փաստաթղթի և առանց լիազորագրի իրավաբանական անձի անունից գործելու իրավունք ունեցող անձանց համապատասխան պաշտոնի նշանակման փաստը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում:

**4.1.3.3.** Բանկն արժեթղթերի հաշվի վերաբացման գործընթացում նախքան նույնականացումը՝ Կարգի 4.1.3.6. կետով սահմանված փաստաթղթերը անձից ստանում է արժեթղթերի հաշվի վերաբացման համապատասխան հանձնարարականի հետ միասին: «Արժեթղթերի Պահառության» պայմանագիրը Բանկի և Հաշվետիրոջ միջև կնքվում է վերջինիս Կարգով սահմանված ձևով նույնականացումից հետո:

**4.1.3.4.** Բանկի համապատասխան ստորաբաժանման իրավասու աշխատակիցը Բանկի հաճախորդը հանդիսացող անձի համար հաշիվ բացելիս Հաճախորդի կողմից իրեն ներկայացված համապատասխան փաստաթղթերի և տվյալների հիման վրա Համակարգում ստուգում է տվյալ Հաճախորդի համար ՀԿԴ-ի կողմից բացված ժամանակավոր հաշվի կարգավիճակով հաշվի առկայությունը: Ստուգման նպատակով Բանկը հաշվի վերաբացման հանձնարարականը ներկայացնում է ՀԿԴ, որի արդյունքում Համակարգ են մուտքագրվում Հաճախորդի կողմից ներկայացված հետևյալ տեղեկությունները.

1) Անունը (այնպես, ինչպես նշված է անձը հաստատող փաստաթղթում)՝ ֆիզիկական անձի դեպքում, անվանումը (այնպես, ինչպես նշված է պետական գրանցման փաստաթղթում)՝ իրավաբանական անձի դեպքում;

2) Ազգանունը (այնպես, ինչպես նշված է անձը հաստատող փաստաթղթում);

3) Անձը հաստատող փաստաթղթի համարը և սերիան (սերիան՝ առկայության դեպքում)՝ ֆիզիկական անձանց դեպքում, պետական գրանցման կամ դրան համարժեք այլ վկայականի համարը և սերիան (սերիան՝ առկայության դեպքում)՝ իրավաբանական անձանց դեպքում;

|                     |   |                                 |                            |              |
|---------------------|---|---------------------------------|----------------------------|--------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                 | <b>Կոնֆիդենցիալ</b>        |              |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Ամսաթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>13/39</i> |

4) Բնակության վայրը՝ ֆիզիկական անձի դեպքում, փոստային հասցեն՝ իրավաբանական անձի դեպքում;

5) Ծննդյան ամսաթիվը ֆիզիկական անձանց դեպքում;

6) ՀԿԴ-ի կողմից բացված արժեթղթերի ժամանակավոր հաշվի համարը;

7) ՀԿԴ-ի կողմից բացված արժեթղթերի ժամանակավոր հաշվի համարը (առկայության դեպքում), որը ՀԿԴ-ի կողմից տրվել է մինչև ՀԿԴ-ի 2013թ. կանոնների ընդունումը;

8) Թողարկողի անվանումը կամ արժեթղթերի ԱՍՏՕն կամ ԱՆՕն (նշվում է այն դեպքում, եթե տվյալ անձը արդեն իսկ որևիցե ընկերության արժեթղթերի սեփականատեր է)

9) Անձին պատկանող արժեթղթերի քանակը (նշվում է այն դեպքում, եթե տվյալ անձը արդեն իսկ որևիցե ընկերության արժեթղթերի սեփականատեր է):

4.1.3.5. Ժամանակավոր հաշվի կարգավիճակով հաշիվը Բանկի կողմից համարվում է վերաբացված կամ վերաբացվում է, եթե 4.1.3.6. կետով սահմանված տեղեկություններից առնվազն 5 ցանկացած տեղեկություն համընկնում է Համակարգում ՀԿԴ-ի կողմից բացված արժեթղթերի հաշվում առկա տեղեկությունների հետ և միևնույն ժամանակ նույնականացվում է:

4.1.3.6. Ֆիզիկական անձը արժեթղթերի հաշվի բացման ժամանակ Բանկին է ներկայացնում հանձնարարական /հավելված 3/, որը պարունակում է հետևյալ տեղեկությունները.

1) Անուն, ազգանուն;

2) Ծննդյան ամսաթիվ;

3) Քաղաքացիությունը՝ երկրի անվանմամբ;

4) Անձը հաստատող փաստաթղթի տեսակը, համարը, սերիան;

5) ՀՀ ռեզիդենտ Հաշվետիրոջ հանրային ծառայությունների (կամ սոցիալական քարտի) համարանիշը կամ վերջինիս բացակայության դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը, ոչ ռեզիդենտ Հաշվետիրերի դեպքում՝ անձին միանշանակ նույնականացնող այլ համարժեք համարանիշը (առկայության դեպքում)

6) Հասցեն ( հաշվառման և բնակության՝ տվյալ պահին);

7) Կապի միջոցները (մասնավորապես՝ հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ՝ առկայության դեպքում);

8) Բանկային հաշվի համարը և սպասարկող բանկի վավերապայմանները (առկայության դեպքում);

9) Նշում լիազորված ներկայացուցչի առկայության մասին՝ նշելով լիազորությունների շրջանակը;

10) Իրավաբանական անձ հանդիսացող լիազորված ներկայացուցչի դեպքում՝ պաշտոնատար անձի ստորագրությունը և եթե տվյալ անձը իրավաբանական անձի լիազորված ներկայացուցիչն է դրա հիմնադիր փաստաթղթերի համաձայն և իրավունք ունի գործել տվյալ իրավաբանական անձի անունից առանց լիազորագրի, նաև իրավաբանական անձի կնիքը (առկայության դեպքում);

11) Ֆիզիկական անձ հանդիսացող լիազորված ներկայացուցչի առկայության դեպքում՝ սույն կետի 1)-ից 6) ենթակետերով նախատեսված տեղեկությունները /լրացնել հավելված 4-ը/:

|                     |   |                                 |                            |              |
|---------------------|---|---------------------------------|----------------------------|--------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                 | <b>Կոնֆիդենցիալ</b>        |              |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Ամսաթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>14/39</i> |

**4.1.3.7.** Հաշվի բացման հանձնարարականը ստորագրվում է Հաշվետիրոջ կամ վերջինիս լիազոր ներկայացուցչի կողմից, ինչպես նաև կատարվում է նշում այն մասին թե տվյալ Հաշվետիրոջը ռեեստրից տեղեկությունների տրամադրումն ինչ եղանակով պետք է իրականացվի (փաստաթղթային կամ էլեկտրոնային):

**4.1.3.8.** Իրավաբանական անձը արժեթղթերի հաշվի բացման ժամանակ ՀՕ-ին է ներկայացնում հանձնարարական /հավելված 6, հավելված 7./, որը պարունակում է հետևյալ տեղեկությունները.

- 1) Հաշվետիրոջ անվանումը;
- 2) Գտնվելու վայրը, փոստային հասցեն, կապի միջոցները (մասնավորապես՝ հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ, առկայության դեպքում);
- 3) Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ);
- 4) Պետական գրանցում շնորհած երկիրը, պետական գրանցումը հավաստող փաստաթղթի համարը, սերիան (առկայության դեպքում), գրանցման ամսաթիվը (օր/ամիս/տարի) և գրանցող մարմնի անվանումը;
- 5) Կենտրոնական բանկի ՍիԲիԷյՆԵթ համակարգչային ցանցում գրանցված հասցեն (առկայության դեպքում);
- 6) Հաշվետիրոջ անունից գործելու լիազորված մեկ կամ մի քանի անձանց անունը, ազգանունը, անձնագրի սերիան, համարը, պաշտոնը և յուրաքանչյուրի լիազորությունների շրջանակը,
- 7) Բանկային հաշվի համարը և սպասարկող բանկի վավերապայմանները (առկայության դեպքում)։

**4.1.3.9.** Հանձնարարականը ստորագրվում է Հաշվետիրոջ լիազորված ներկայացուցչի ստորագրությամբ և, եթե տվյալ անձը իրավաբանական անձի լիազորված ներկայացուցիչն է՝ դրա հիմնադիր փաստաթղթերի համաձայն և իրավունք ունի գործել տվյալ իրավաբանական անձի անունից առանց լիազորագրի, նաև կնքվում է իրավաբանական անձի կնիքով (առկայության դեպքում), ինչպես նաև կատարվում է նշում այն մասին, թե տվյալ Հաշվետիրոջը Ռեեստրից տեղեկությունների տրամադրումն ինչ եղանակով պետք է իրականացվի (փաստաթղթային կամ էլեկտրոնային):

**4.1.3.10.** Բաժնային և Համատեղ սեփականության հաշիվները բացելիս՝ Հաշվետերերի կողմից Բանկին են ներկայացվում արժեթղթերի հաշվի բացման կամ վերաբացման հանձնարարականներ, որոնք պարունակում են յուրաքանչյուր Հաշվետիրոջ համար Կարգով սահմանված տեղեկությունները /լրացնել նաև հավելված 19:

**4.1.3.11.** Ընդհանուր սեփականության հաշիվները բացվում են այն դեպքում, երբ միևնույն արժեթղթերը պատկանում են մեկից ավելի անձանց:

**4.1.3.12.** Օրենքով սահմանված պահառություն իրականացնելու թույլտվություն ունեցող անձինք (այսուհետ նաև՝ Պահառու) Համակարգում անվանատիրոջ հաշիվ ունենալու նպատակով պարտավոր են ՀԿԴ-ի հետ կնքել ենթապահառության համապատասխան պայմանագիր՝ Բանկի միջնորդությամբ, իսկ եթե Պահառուն ՀՕ է, ապա ՀԿԴ-ի հետ ուղղակիորեն կնքում է ենթապահառության պայմանագիր:



|                     |   |                                 |                            |              |
|---------------------|---|---------------------------------|----------------------------|--------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                 | <b>Կոնֆիդենցիալ</b>        |              |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Սևսաթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>15/39</i> |

**4.1.3.13.** Պահառուն Համակարգում անվանատիրոջ արժեթղթերի հաշվի բացման համար Բանկին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) Համապատասխան դիմում ուղղված Բանկի գործադիր մարմնի ղեկավարին՝ ենթապահառության պայմանագիր կնքելու ցանկությամբ, ինչպես նաև ենթապահառության պայմանագրի կնքման համար անհրաժեշտ վավերապայմանները՝ այդ թվում իրավասու էլեկտրոնային հասցեն (առկայության դեպքում), բանկային վավերապայմանները;

2) Օրենքով սահմանված պահառություն իրականացնելու թույլտվության կամ լիցենզիայի պատճենը (Օտարերկրյա պահառուի դեպքում՝ իր երկրի պետական մարմնի կողմից տրված թույլտվության կամ լիցենզիայի պատճենը, որի համաձայն օտարերկրյա պահառուն իրավունք ունի իր անունով այլ անձանց պատկանող արժեթղթերի հաշիվներ վարել);

3) Պետական գրանցման վկայականի պատճենը;

4) Պահառուի գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնի նշանակումը հավաստող փաստաթղթի պատճենը;

5) Լիազորված անձի լիազորությունները հավաստող փաստաթուղթը, որն առնվազն ապահովում է լիազորված անձի նույնականացումը և հստակ նախատեսում է լիազորությունների շրջանակը:

**4.1.3.14.** Կարգի 4.1.3.13. կետով սահմանված բոլոր փաստաթղթերը Բանկին են ներկայացվում հայերեն լեզվով, իսկ Օտարերկրյա Պահառուի դեպքում՝ 2)-ից 5) ենթակետերով սահմանված փաստաթղթերը՝ նոտարական կարգով թարգմանված:

**4.1.3.15.** Կարգի 4.1.3.13. կետով սահմանված փաստաթղթերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Բանկի միջնորդությամբ ՀԿԴ-ի և Պահառուի միջև կնքվում է ենթապահառության Պայմանագիր:

**4.1.3.16.** Բանկը մինչև անձի անունով կարող է բացել նույն տեսակի միայն մեկ հաշիվ (բացառությամբ համատեղ սեփականության հաշիվների):

**4.1.3.17.** Բանկի միջնորդությամբ արժեթղթերի հաշվի բացման գործառնությունը Համակարգում գրանցվում է Կարգով սահմանված տեղեկությունները կամ հանձնարարականները ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

**4.1.3.18.** Բանկը նոտարի կողմից ժառանգության հետ կապված հարցման հիման վրա նույնականացված ժամանակավոր հաշվի կարգավիճակով հաշիվը Համակարգի միջոցով վերաբացում է վերջինիս տալով ժառանգության հաշվի կարգավիճակը, առանց դրանում հետագա նույնականացման գործողություններ կատարելու:

**4.1.3.19.** Բանկի հետ «Արժեթղթերի պահառության» կամ ենթապահառության պայմանագրի կնքման արդյունքում Հաշվետերը Կարգով սահմանված ձևով ստանում է Կարգով սահմանված ծառայությունների մատուցումը:

**4.1.4. Արժեթղթերի հաշվի տվյալների փոփոխությունը**

**4.1.4.1.** Արժեթղթերի հաշվի տվյալների փոփոխության դեպքում Հաշվետերը կամ նրա լիազոր ներակայացուցիչը Բանկին է ներկայացնում համապատասխան փոփոխությունը հավաստող փաստաթուղթը (եթե փոփոխությունը պայմանավորված է Հաշվետիրոջ անվան կամ նրա անձը հաստատող փաստաթղթի/գրանցման վկայականի փոփոխմամբ), ինչպես նաև արժեթղթերի հաշվի տվյալների փոփոխման հանձնարարական /Հավելված 3, Հավելված 7/:

|                     |   |                                 |                            |              |
|---------------------|---|---------------------------------|----------------------------|--------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                 | <b>Կոնֆիդենցիալ</b>        |              |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Ստանդիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>16/39</i> |

**4.1.4.2.** Բանկը հաշվի փոփոխման հանձնարարականի հիման վրա արժեթղթերի հաշվի տվյալների փոփոխությունը Համակարգում գրանցում է Կարգով սահմանված ձևով փաստաթղթերը և հանձնարարականները ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:

**4.1.5. Արժեթղթերի հաշվի նույնականացման կարգը**

**4.1.5.1.** Բանկը Հաշվետիրոջ կողմից ներկայացված տվյալների հիման վրա արժեթղթերի հաշվի նույնականացում իրականացնելիս պետք է առաջնորդվի հետևյալ սկզբունքներով.

1) Այն դեպքում, երբ Հաշվետիրոջ կողմից ներկայացված տեղեկություններից Համակարգում համընկել են Կարգի միայն 4.1.3.6. կետի 1), 2), 6), 8) և 9) ենթակետերով սահմանված տեղեկությունները, ապա Բանկը տվյալ արժեթղթերի հաշվի նույնականացումը իրականացնում է միայն Թողարկողի (Թողարկողների) կողմից պատշաճ հավաստիացված տեղեկանքի (տեղեկանքների) հիման վրա:

2) Այն դեպքում, երբ Բանկի կողմից հաշվի վերաբացման դեպքում Կարգի 4.1.3.6. կետի 2) ենթակետով սահմանված Համակարգում առկա տեղեկությունը չի համընկնում Հաշվետիրոջ կողմից ներկայացված տեղեկության հետ, ապա Բանկը Հաշվետիրոջից պահանջում է Թողարկողի (Թողարկողների) կողմից պատշաճ հավաստիացված տեղեկանք կամ անձնագրային բաժնից համապատասխան տեղեկանք, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ Թողարկողի (Թողարկողների) կողմից տրված համապատասխան տեղեկանք կամ համապատասխան հիմքեր տրված պետական գրանցումն իրականացրած մարմնի կողմից կամ դատարանի համապատասխան որոշում:

**4.1.5.2.** Ժառանգության իրավունքի գրանցման դեպքում նույնականացումը իրականացվում է նոտարի կողմից կատարված հարցման մեջ նշված տեղեկությունների և թողարկողի կողմից տրված տեղեկանքի հիման վրա (անհրաժեշտության դեպքում):

**4.1.5.3.** Այն դեպքում, երբ արժեթղթերի հաշվի վերաբացման գործընթացում Բանկից անկախ պատճառներով արժեթղթերի հաշիվը հնարավոր չի լինում նույնականացնել, ապա Բանկը տվյալ արժեթղթերի հաշվին տալիս է չնույնականացված հաշվի կարգավիճակ՝ արժեթղթերի հաշվում համապատասխան նշում կատարելով:

**4.1.5.4.** Եթե չնույնականացված հաշվի կարգավիճակ ունեցող արժեթղթերի հաշիվը Կարգով սահմանված ձևով չի նույնականացվում այն վերաբացման պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում, ապա Բանկն այդ մասին տեղեկացնում է ՀԿԴ՝ նշելով արժեթղթերի հաշվի համարը:


**4.1.5.5.** ՀԿԴ-ն արժեթղթերի հաշվի նույնականացման անհնարինության մասին տեղեկությունը ստանալու պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում արգելափակում է Բանկի իրավասությունը արժեթղթերի հաշվի նկատմամբ:

**4.1.6. Արժեթղթերի հաշվի փակում**

**4.1.6.1.** Բանկի միջոցով բացված արժեթղթերի հաշիվը կարող է փակվել և/կամ արժեթղթերի պահառության պայմանագիրը կարող է լուծվել.

- 1) Հաշվետիրոջ ցանկությամբ համապատասխան գրավոր դիմումի հիման վրա;
- 2) Կարգով սահմանված ձևով և դեպքերում:

**4.1.6.2.** Բանկը արժեթղթերի հաշվի փակման դիմումը Հաշվետիրոջից ստացման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրանցում է Համակարգում, որի արդյունքում արժեթղթերի

|   |   |                                 |                            |              |
|---|---|---------------------------------|----------------------------|--------------|
|  | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                 | <b>Կոնֆիդենցիալ</b>        |              |
|   | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Սմասթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>17/39</i> |

հաշիվը Համակարգում ստանում է փակված արժեթղթերի հաշվի կարգավիճակ: Արժեթղթերի հաշիվը փակվում է Բանկի և Հաշվետիրոջ միջև կնքված «Արժեթղթերի Պահառության պայմանագրի լուծվելու դեպքում Հաշվետիրոջ ունեցած ժամկետանց բոլոր պարտավորությունները շարունակում են պահպանել իրենց ուժը մինչև դրանց ամբողջական կատարումը:

**4.1.6.3.** Համակարգում կարող են փակվել միայն արժեթղթերի գրոյական մնացորդով արժեթղթերի հաշիվները:

**4.1.6.4.** Հաշվետիրոջ ցանկությամբ արժեթղթերի ոչ գրոյական մնացորդով հաշվի փակման համար Հաշվետիրը՝ մինչև արժեթղթերի հաշվի փակման դիմումի ներկայացումը, պարտավոր է հաշվում հաշվեգրված արժեթղթերի պորտֆելը փոխանցել այլ ակտիվ հաշվի կարգավիճակով արժեթղթերի հաշվին:

**4.1.6.5.** Հաշվետիրոջ ցանկությամբ արժեթղթերի հաշիվը փակվում է Հաշվետիրոջ հետ կնքված պահառության պայմանագրի լուծման արդյունքում:

**4.1.6.6.** Հաշվետիրոջ ցանկությամբ արժեթղթերի պահառության պայմանագիրը լուծվում է պայմանագրի լուծման վերաբերյալ համաձայնությունը Հաշվետիրոջ և Բանկի կողմից ստորագրվելու (հաստատելու) արդյունքում: Արժեթղթերի պահառության պայմանագրի լուծման վերաբերյալ համաձայնությունը ստորագրվում է, եթե Հաշվետիրը կատարել է ՀԿԴ-ի և Կարգով սահմանված բոլոր պարտավորությունները:

**4.1.6.7.** Արժեթղթերի գրոյական մնացորդով հաշվի պարագայում արժեթղթերի պահառության պայմանագրի լուծման վերաբերյալ համաձայնությունը ստորագրումից հետո Բանկը արժեթղթերի հաշվի փակման հանձնարարականն անմիջապես գրանցում է Համակարգում, որի արդյունքում արժեթղթերի հաշիվը Համակարգում ստանում է արժեթղթերի փակված հաշվի կարգավիճակ:

**4.1.7. Արժեթղթերի փոխանցմամբ պայմանավորված գործառնություններ**

**4.1.7.1.** Արժեթղթերի փոխանցմամբ պայմանավորված գործառնությունները Համակարգում իրականացվում են հետևյալ տեսակներով, որոնց մեջ չի ներառվում արժեթղթերի փոխանցման գործառնությունը, որը արդյունք է ԿՇ-ում կնքված գործարքի.

- 1) Ազատ առաքում կամ ST փոխանցում;
- 2) Առաքում վճարման դիմաց կամ DVP փոխանցում;
- 3) Ազատ առաքում՝ համաձայնությամբ կամ FOP փոխանցում;
- 4) Արժեթղթերի պորտֆելի փոխանցում կամ պորտֆելի փոխանցում;
- 5) Կենտրոնական բանկի և առևտրային բանկի հետ կնքված ռեպո պայմանագրից բխող արժեթղթերի փոխանցում:

**4.1.7.2.** Դատարանի վճռի և ժառանգության հիման վրա արժեթղթերի փոխանցումները Համակարգում կատարվում են ազատ առաքմամբ /հավելված 10/՝ շահագրգիռ կողմի պահանջով:

**4.1.7.3.** Նվիրատվության (նվիրաբերության) հիման վրա արժեթղթերի փոխանցումները Համակարգում կատարվում են ազատ առաքմամբ (ST փոխանցում) /հավելված 10/՝ նվիրատուի պահանջով, եթե նվիրատուն ներկայացնում է նվիրատվության պայմանագիրը, կամ համաձայնությամբ ազատ առաքմամբ (FOP փոխանցում)/հավելված 13/, եթե նվիրատվության

|                     |   |                                 |                            |              |
|---------------------|---|---------------------------------|----------------------------|--------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                 | <b>Կոնֆիդենցիալ</b>        |              |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Ամսաթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>18/39</i> |

պայմանագիրը ներկայացված չէ: Թողարկողի կողմից տեղաբաշխված արժեթղթերի հետզնման կամ ձեռքբերման հիմքով: Թողարկողի արժեթղթերի հաշվին արժեթղթերի փոխանցումները Համակարգում կատարվում են ազատ առաքում՝ համաձայնությամբ (FOP փոխանցում) կամ առաքում վճարման դիմաց (DVP փոխանցում) /հավելված 11/ տեսակներով:

**4.1.7.4.** Բանկի միջնորդությամբ ազատ առաքմամբ արժեթղթերի փոխանցման գործառնություն կարող է գրանցվել միայն այն դեպքում, եթե փոխանցող կողմ հանդիսացող արժեթղթերի հաշիվն ունի ակտիվ հաշվի կարգավիճակ՝ բացառությամբ ժառանգության և դատարանի վճռի հիման վրա կատարվող արժեթղթերի փոխանցման:

**4.1.7.5.** Ազատ առաքմամբ արժեթղթերի փոխանցման գործառնությունը գրանցելու համար արժեթղթերի փոխանցող կողմ հանդիսացող Հաշվետերը պարտավոր է դիմել Բանկին և ներկայացնել արժեթղթերի փոխանցման հանձնարարական հետևյալ տեղեկություններով /հավելված 10.

- 1)
- 2) Արժեթղթեր փոխանցող և ստացող կողմերի անուն, ազգանունները (անվանումները).
- 3) Արժեթղթեր փոխանցող և ստացող կողմեր հանդիսացող արժեթղթերի հաշիվների համարները;
- 4) Փոխանցվող արժեթղթերի Թողարկողի անվանումը և ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն
- 5) Փոխանցման ենթակա արժեթղթերի քանակը;
- 6) Արժեթղթերի փոխանցման գործառնության տեսակի մասին էական տվյալները, որը Հաշվետերը հարկ կհամարի ներկայացնել;
- 7) Նշում արժեթղթերի փոխանցման արդյունքում վերջնական շահառուի վերաբերյալ (եթե արժեթղթերը փոխանցվում են անվանատիրոջ արժեթղթերի հաշվին)
- 8) : Հաշվի օպերատորի կանոններով սահմանված այլ տեղեկություններ և փաստաթղթեր:

**4.1.7.6.** Դատարանի վճռի հիման վրա արժեթղթերի փոխանցման դեպքում շահագրգիռ կողմը Բանկին է ներկայացնում դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը կամ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության համապատասխան որոշումը, ինչպես նաև դիմում արժեթղթերի փոխանցման վերաբերյալ:

**4.1.7.7.** Այն դեպքում, երբ դատարանի վճիռը կամ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության համապատասխան որոշումը ներկայացվել է Բանկին, սակայն դատարանի վճռի հիման վրա փոխանցող կողմ հանդիսացող Հաշվետիրոջ արժեթղթերի հաշիվը չի վարվում Բանկի միջնորդությամբ կամ տվյալ վճռով (որոշմամբ) պատասխանող կողմ է հանդիսանում ՀԿԴ-ն, ապա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը կամ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության համապատասխան որոշումը Բանկի կողմից այն ստացման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է ՀԿԴ-ին:

**4.1.7.8.** ՀԿԴ-ն կարող է Բանկին վերահասցեագրել դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը կամ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության համապատասխան որոշումը՝ այն ստացման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում, եթե փոխանցող կողմ հանդիսացող արժեթղթերի հաշիվը ունի ակտիվ հաշվի կարգավիճակ և սպասարկվում է Բանկի կողմից:

|                     |   |                                 |                            |              |
|---------------------|---|---------------------------------|----------------------------|--------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                 | <b>Կոնֆիդենցիալ</b>        |              |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Ամսաթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>19/39</i> |

**4.1.7.9.** Ժառանգության գրանցման արդյունքում արժեթղթերի ազատ առաքման համար ժառանգը պարտավոր է Բանկին ներկայացնել հետևյալ տեղեկությունները և փաստաթղթերը.

1) Ժառանգության իրավունքի վկայականը;

2) Արժեթղթերի հաշվի բացման համար Կարգով սահմանված փաստաթղթերը, եթե ժառանգի (ժառանգների) համար նախկինում Բանկի միջնորդությամբ արժեթղթերի հաշիվ բացված չի եղել;

3) Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ:

**4.1.7.10.** Բանկն ազատ առաքմամբ արժեթղթերի փոխանցման գործառնությունը գրանցում է Կարգով սահմանված հանձնարարականը /հավելված 10/ ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

**4.1.7.11.** Բանկը «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով արժեթղթերի փոխանցման նպատակով արժեթղթերի փոխանցումը Համակարգում գրանցումից առնվազն 1 օր առաջ ՀԿԴ-ին ներկայացնում է համապատասխան դիմում՝ նշելով «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով արժեթղթերի փոխանցման նպատակով օգտագործվող իրավասու հաշվի համարը, որից փոխանցված դրամական միջոցները ՀԿԴ-ի առևտրային հաշվին կդիտվի, որպես «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով արժեթղթերի փոխանցման դիմաց վճարման ապահովման համար իրավասու հաշիվ:

**4.1.7.12.** «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով արժեթղթերի փոխանցման նպատակով Հաշվետերը կամ նրա լիազոր ներկայացուցիչը Բանկին է ներկայացնում արժեթղթերի փոխանցման հանձնարարական /հավելված 11 /, որն էլ Բանկի կողմից Ծրագրային համակարգ է մուտքագրվում աշխատանքային օրվա ժամը 9:30-15:00:

**4.1.7.13.** «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով արժեթղթերի փոխանցման հանձնարարականը ներառում է հետևյալ տեղեկությունները.

- 1) Արժեթղթեր փոխանցող և ստացող կողմերի անուն, ազգանունները (անվանումները).
- 2) Նշում արժեթղթերի փոխանցման արդյունքում վերջնական շահառուի վերաբերյալ (եթե արժեթղթերը փոխանցվում են անվանատիրոջ հաշվին).
- 3) Արժեթղթերը ստացողի արժեթղթերի հաշվի համարը և այդ հաշիվը սպասարկող Հաշվի Օպերատորի անվանումը.
- 4) Արժեթղթերը փոխանցող կողմի արժեթղթերի հաշվի համարը.
- 5) Փոխանցման ենթակա արժեթղթերի ԱՄՏՕ-ն կամ ԱՆԾ-ն.
- 6) Արժեթղթերի քանակը.
- 7) Վճարման ենթակա գումարի չափը.
- 8) Դրամական միջոցի արժույթը.
- 9) Գործարքի կնքման ամսաթիվը (առկայության դեպքում).
- 10) Վերջնահաշվարկի ամսաթիվը.
- 11) Վերջնահաշվարկի իրականացման համար Ծրագրային համակարգում նախատեսված այլ տեղեկությունները (առկայության դեպքում).
- 12) Կարգով և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ:

|                     |   |                                 |                            |              |
|---------------------|---|---------------------------------|----------------------------|--------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                 | <b>Կոնֆիդենցիալ</b>        |              |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Ամսաթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>20/39</i> |

**4.1.7.14.** «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով արժեթղթերի ձեռք բերման նպատակով արժեթղթեր ստացող կողմ հանդիսացող Հաշվետերը կամ նրա լիազոր ներակայացուցիչը Բանկին է ներկայացնում արժեթղթերի ձեռք բերման հանձնարարական /հավելված 12, որն էլ Բանկի կողմից ծրագրային համակարգ է մուտքագրվում աշխատանքային օրվա ժամը 9:30-15:00:

**4.1.7.15.** «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով արժեթղթերի ձեռք բերման հանձնարարականը ներառում է հետևյալ տեղեկությունները.

- 1) Արժեթղթերը ստացող կողմի անուն, ազգանունը (անվանումը).
- 2) Արժեթղթերը փոխանցողի արժեթղթերի հաշվի համարը և այդ հաշիվը սպասարկող Հաշվի Օպերատորի անվանումը.
- 3) Արժեթղթերը ստացող կողմի արժեթղթերի հաշվի համարը.
- 4) Ստացվելիք արժեթղթերի ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն.
- 5) Արժեթղթերի քանակ.
- 6) Վճարման ենթակա գումարի չափը.
- 7) Դրամական միջոցի արժույթը.
- 8) Վերջնահաշվարկի ամսաթիվը.
- 9) Կարգով և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ:

Արժեթղթերի ձեռք բերման հանձնարարական ներկայացրած Հաշվետերը կամ նրա լիազոր ներկայացուցիչը մինևույն ժամանակ իրականացնում են արժեթղթերի ձեռք բերման համար վճարման ենթակա գումարի փոխանցում Բանկի «Առաքում վճարման դիմաց» գործառնության համար նախատեսված համապատասխան իրավասու հաշվին:

**4.1.7.16.** Արժեթղթեր ստացող կողմի արժեթղթերի հաշիվը սպասարկող ՀՕ-ը իր իրավասու հաշվից Bank-Mail համակարգի ՀՏ 100 կամ ՀՏ 202 (ՀՀ դրամի փոխանցման համար) և ՀՏ 203 (արտարժույթի փոխանցման համար) հաղորդագրության միջոցով ՀԿԴ-ի՝ ՀՀ Կենտրոնական բանկում բացված դրամի առևտրային հաշվին է փոխանցում արժեթղթերը ձեռքբերելու համար անհրաժեշտ գումարը: Ընդ որում, վերոնշյալ հաղորդագրության «Նպատակ» դաշտում նշվում է DVP տառերը: Մինևույն ժամանակ Համակարգում գրանցում է նաև տվյալ գործարքի համար անհրաժեշտ գումարի մեծությունը, որն էլ արտացոլվում է վերջինիս՝ Համակարգում դրամական միջոցների արտացոլման համար բացված հայելային հաշվին:

**4.1.7.17.** Վերջնահաշվարկի օրվա մինչև 15:40ը, այն պահի դրությամբ, երբ Համակարգում համընկնում են արժեթղթերի փոխանցող և ստացող կողմերի ՀՕ-ների հանձնարարականները, և ՀԿԴ-ի առևտրային հաշվին առկա է հանձնարարականում նշված վճարման ենթակա գումարի չափով դրամական միջոց, ապա արժեթղթերի փոխանցումը գրանցվում է Համակարգում, տեղի է ունենում վերջնահաշվարկ, որի արդյունքում ՀԿԴ-ի առևտրային հաշվից վճարման ենթակա գումարը փոխանցվում է վաճառող կողմի ՀՕ-ի իրավասու հաշվին:

**4.1.7.18.** «Ազատ առաքում՝ համաձայնությամբ» սկզբունքով արժեթղթերի փոխանցումը /հավելված 13/ տեղի է ունենում նույն ընթացակարգով, ինչ «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով արժեթղթերի փոխանցման դեպքում՝ առանց դրամական միջոցի առկայության պահանջի:



|                     |   |                                 |                            |              |
|---------------------|---|---------------------------------|----------------------------|--------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                 | <b>Կոնֆիդենցիալ</b>        |              |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Մտնաթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>21/39</i> |

**4.1.7.19.** «Արժեթղթերի պորտֆելի փոխանցմամբ» արժեթղթերի փոխանցման գործառնությունը Համակարգում գրանցվում է.

1) Հաշվետիրոջ հանձնարարականի հիման վրա /հավելված 20, երբ Հաշվետերը իր արժեթղթերի հաշվում առկա արժեթղթերն ամբողջ մնացորդով մի ՀՕ-ի սպասարկման տակ գտնվող արժեթղթերի հաշվից փոխանցում է այլ ՀՕ-ի մոտ բացված իր արժեթղթերի մեկ այլ հաշվին;

2) Կարգով նախատեսված այլ դեպքերում:

**4.1.7.20.** Հաշվետերը արժեթղթերի պորտֆելի փոխանցման համար Բանկին է ներկայացնում համապատասխան պորտֆելի փոխանցման հանձնարարական /հավելված 20/՝ հետևյալ տեղեկություններով.

1) Արժեթղթերի փոխանցող և ստացող կողմ հանդիսացող արժեթղթերի հաշիվների համարները;

2) Այն ՀՕ-ի անվանումը, ում միջոցով վարվում է արժեթղթեր ստացող կողմ հանդիսացող արժեթղթերի հաշվի համարը:

**4.1.7.21.** Բանկի կողմից արժեթղթերի պորտֆելի փոխանցման հանձնարարականը ենթակա է կատարման վերջինիս կողմից ստացման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում:

**4.1.7.22.** «Ռեպո, հակադարձ ռեպո և ռեպո պայմանագրի խզում» գործարքներից բխող արժեթղթերի փոխանցմամբ պայմանավորված գործառնությունների գրանցումները և ժամկետները Համակարգում կարգավորվում են համապատասխան պայմանագրերով: Ռեպո, հակադարձ ռեպո գործարքներից բխող արժեթղթերի փոխանցումը կարող է իրականացվել երկու եղանակով.

1) Ռեպո գործարքի կնքման արդյունքում Բանկը Bank-Mail համակարգի ՀՏ 523 (24B դաշտում նշվում է REP) հաղորդագրության միջոցով ՀԿԴ-ին հանձնարարական է ներկայացնում Համակարգում իր սեփական հաշվից ՀՏ 523-ում նշված արժեթղթերը նշված քանակով ՀՀ Կենտրոնական բանկի սեփականատիրոջ արժեթղթերի հաշվին փոխանցելու համար: Համակարգը ստուգում է ՀՏ 523-ում պարունակվող տեղեկություններն իր մոտ առկա նույնաբովանդակ տեղեկությունների հետ: Ամբողջական համընկման դեպքում իրականացվում է արժեթղթերի փոխանցում, ինչպես նաև փոխանցված արժեթղթերի ծանրաբեռնում ռեպո գործարքի հիմքով, որի արդյունքում հաստատման վերաբերյալ ՀԿԴ-ն Bank-Mail համակարգի ՀՏ 535 հաղորդագրությամբ՝ տեղեկացնում է Բանկին, իսկ ՀՏ 523 պատճենը ուղարկվում է ՀՀ Կենտրոնական բանկին: Եթե ստուգման արդյունքում ի հայտ է գալիս որևէ անհամապատասխանություն, ապա ՀԿԴ-ն Բանկմեյլ համակարգի ՀՏ 535 հաղորդագրությամբ տեղեկացնում է այդ մասին Բանկին:

2) Երկրորդ տարբերակի դեպքում Բանկը ՀԿԴ է ներկայացնում Բանկի (եթե գործարքի կողմը Բանկն է) կամ Բանկի կողմից սպասարկվող առևտրային բանկի (եթե գործարքի կողմը առևտրային բանկ է, որին՝ որպես ՀՕ, սպասարկում է Բանկը) արժեթղթերի հաշվից ՀՀ Կենտրոնական բանկի սեփականատիրոջ արժեթղթերի հաշվին արժեթղթերի փոխանցման հանձնարարական: Համակարգի կողմից հանձնարարականը գրանցվում է և իրականացվում է փոխանցված արժեթղթերի ծանրաբեռնում ռեպո գործարքի հիմքով, որի արդյունքում

|                     |   |                                 |                            |              |
|---------------------|---|---------------------------------|----------------------------|--------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                 | <b>Կոնֆիդենցիալ</b>        |              |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Ամսաթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>22/39</i> |

ստեղծվում և առաքվում են Bank-Mail համակարգով ՀՏ 535 հաղորդագրություն դեպի Բանկ և ՀՏ 523 պատճենը՝ դեպի ՀՀ Կենտրոնական բանկ:

**4.1.7.23.** Հակադարձ ռեպո կամ ռեպո զամբյուղից արժեթղթերի հետ փոխանցմամբ պայմանավորված արժեթղթերի փոխանցման գործառնությունը Համակարգում կարող է գրանցվել նույնպես 4.1.7.23. կետի 1) կամ 2) ենթակետերով սահմանված կարգով: Այս դեպքում արժեթղթերի փոխանցող կողմ է հանդիսանում ՀՀ Կենտրոնական բանկը, իսկ Bank-Mail համակարգի ՀՏ 523 հաղորդագրության 24B դաշտում նշվում է RMT:

**4.1.7.24.** Ռեպո պայմանագրի լուծմամբ պայմանավորված արժեթղթերի փոխանցման նպատակով ՀՀ Կենտրոնական բանկը Bank-Mail համակարգի ՀՏ 523 (24B դաշտում նշվում է RCL) հաղորդագրությամբ հանձնարարական է ներկայացնում ՀԿԴ: Համակարգը ստուգում է հանձնարարականում առկա տեղեկությունները Համակարգում առկա նույնաբովանդակ տեղեկությունների հետ: Տեղեկությունների համընկման արդյունքում ՀՀ Կենտրոնական բանկի սեփականատիրոջ արժեթղթերի արժեթղթերի հաշվին արժեթղթերը ծանրաբեռնումից հանվում են, որի արդյունքում ՀՀ Կենտրոնական բանկը, որպես հաստատում ՀԿԴ-ից Bank-Mail համակարգով ստանում է ՀՏ523 պատճենը և ՀՏ535 հաղորդագրությունը: Համակարգի կողմից տեղեկությունների ստուգման արդյունքում անհամապատասխանությունների ի հայտ գալու դեպքում արժեթղթերի փոխանցումը մերժվում է, որի վերաբերյալ ՀՀ Կենտրոնական բանկը ծանուցվում է Համապատասխան ՀՏ535 հաղորդագրությամբ:

**4.1.8. Արժեթղթերի գրավադրմամբ պայմանավորված գործառնություններ**

**4.1.8.1.** Բանկը արժեթղթերի գրավադրման գործառնություն կարող է գրանցել միայն ակտիվ գրավատու կողմ հանդիսացող արժեթղթերի ակտիվ կարգավիճակով հաշվի առկայության դեպքում:

**4.1.8.2.** Բանկը Համակարգում գրավառուի համար բացում է գրավառուի հաշիվ, որտեղ արտացոլվում են գրավառուի օգտին հաշվառված արժեթղթերը, եթե գրավառուն Համակարգում չունի ակտիվ կարգավիճակով սեփականատիրոջ արժեթղթերի հաշիվ կամ չի ցանկանում սեփականատիրոջ արժեթղթերի նոր հաշիվ բացել Բանկի մոտ:

**4.1.8.3.** Արժեթղթերի գրավադրման գործառնությունը գրանցելու համար գրավատուն կամ գրավառուն պարտավոր են դիմել իրենց հաշիվները սպասարկող ՀՕ-ին(ներին) և ներկայացնել հետևյալ տեղեկությունները.

- 1) Թողարկողի անվանումը և ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն;
- 2) Գրավառուի հաշվի համարը և գրավատու կողմի արժեթղթերի հաշվի համարը;
- 3) Գրավադրման ենթակա արժեթղթերի քանակը;
- 4) Գրավադրման դադարեցման ամսաթիվը (առկայության դեպքում);

5) գրավառուի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը, ռեզիդենտ ֆիզիկական անձի դեպքում՝ հանրային ծառայությունների (սոցիալական քարտի) կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու դեպքում՝ դրա բացակայությունը հավաստող տեղեկանքի համարը, ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի դեպքում՝ գրավառուին միանշանակ նույնականացնող այլ համարժեք համարանիշը (առկայության դեպքում), իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ անվանումը, պետական գրանցման համարը, ՀՎՀՀ կամ դրան համարժեք համարը (առկայության դեպքում), գրավառուի հասցեն, կապի միջոցները, եթե

|                     |   |                                 |                            |              |
|---------------------|---|---------------------------------|----------------------------|--------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                 | <b>Կոնֆիդենցիալ</b>        |              |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Ամսաթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>23/39</i> |

Հաշվի Օպերատորին չի ներկայացվում գրավառուի՝ ակտիվ/ գործող կարգավիճակով Սեփականատիրոջ արժեթղթերի հաշվի համարը.

6) Այլ տեղեկություններ և փաստաթղթեր՝ անհրաժեշտության դեպքում:

**4.1.8.4.** Այն դեպքում, երբ տվյալ գրավի գործառնության գրանցման համար օգտագործվող գրավառուի հաշիվը կամ գրավառուի սեփականատիրոջ արժեթղթերի հաշիվը և գրավատուի սեփականատիրոջ արժեթղթերի հաշիվը սպասարկվում են տարբեր ՀՕ-ների կողմից, ապա գրավատու կողմի արժեթղթերի հաշիվը սպասարկող ՀՕ-ի կողմից Համակարգ մուտքագրված արգելադրման հանձնարարականը կատարվում է գրավառուի արժեթղթերի հաշիվը սպասարկող ՀՕ-ի կողմից արժեթղթերի գրավադրման հանձնարարականը հաստատման պահից:

**4.1.8.5.** Գրավատուի կողմից ներկայացված գրավադրման հանձնարարականը /Հավելված 15/ ՀՕ-(ներ)ի կողմից ենթակա է կատարման վերջին(ներ)իս կողմից այն ստացման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

**4.1.9. Արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացման ծառայություն**

**4.1.9.1.** Արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացման ծառայության մատուցման դեպքում գրավառուին Բանկին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերի բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը՝

- 1) Արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացման պայման նախատեսող պայմանագիր/համաձայնագիր;
- 2) ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ գրավատուին կատարված ծանուցումը և ապացույց գրավատուի կողմից դրա ստացման վերաբերյալ, որոնք կարող են Բանկին ներկայացվել ինչպես Բանկին դիմելիս, այնպես էլ գրավի առարկայի իրացման ժամանակ;
- 3) Կարգով սահմանված արժեթղթերի փոխանցման հանձնարարական;
- 4) ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված այլ փաստաթղթեր (այդպիսիք սահմանված լինելու դեպքում);
- 5) Այլ տեղեկություններ և փաստաթղթեր՝ անհրաժեշտության դեպքում:

**4.1.9.2.** Բանկը 5 աշխատանքային օրվա ընթացքում, ստուգելով ներկայացված փաստաթղթերը և համոզվելով, որ դրանցում պահպանվել են Կարգով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները՝ Համակարգում գրանցում է համապատասխան հանձնարարականը: Հակառակ դեպքում հանձնարարականի կատարումը մերժվում է:

**4.1.10. Արժեթղթերի գրավադրման դադարեցումը**

**4.1.10.1.** Արժեթղթերի գրավադրման դադարեցումը կարող է կատարվել հետևյալ դեպքերում.

- 1) Գրավադրման դադարեցման ամսաթվի դրությամբ, որի մասին տեղեկությունը Համակարգ մուտք էր արվել գրավադրման գործառնության գրանցման ժամանակ;
- 2) Գրավառուի կողմից գրավադրման դադարեցման հանձնարարականի /հավելված 16/ ներկայացման դեպքում;
- 3) Դատարանի, Դատական ակտերի հարկադիր կատարողի կամ ՀՀ օրենսդրությամբ նման իրավասություն ունեցող մարմնի համապատասխան որոշման հիման վրա:

|                     |   |                                  |                            |              |
|---------------------|---|----------------------------------|----------------------------|--------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                  | <b>Կոնֆիդենցիալ</b>        |              |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Ստանաթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>24/39</i> |

**4.1.10.2.** Արժեթղթերի գրավադրման դադարեցման հանձնարարականը Բանկի կողմից ենթակա է կատարման հանձնարարականի ստացման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում:

**4.1.11. Արժեթղթերի կամ արժեթղթերի հաշվի սառեցումը և դրա դադարեցումը Հաշվետիրոջ հանձնարարականի հիման վրա**

**4.1.11.1.** Արժեթղթերի կամ արժեթղթերի հաշվի սառեցումը Հաշվետիրոջ կամ նրա լիազոր ներկայացուցիչի կողմից իրականացվում է, որպես իր սեփականատիրոջ արժեթղթերի հաշվով կամ արժեթղթերի հաշվում առկա որևէ արժեթղթով(երով) գործառնությունների իրականացման արգելք: Սառեցման գործառնությունը գրանցելու համար Հաշվետերը կամ նրա լիազոր ներկայացուցիչը Բանկին է ներկայացնում սառեցման համապատասխան հանձնարարականը /հավելված 17/, որը պարունակում է հետևյալ տեղեկությունները.

- 1) Թողարկողի անվանումը կամ ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն;
- 2) Սառեցման ենթակա արժեթղթերի քանակը;
- 3) Սառեցման վերաբերյալ այլ էական տվյալները, որը Հաճախորդը հարկ կհամարի ներկայացնել;
- 4) Այլ տեղեկություններ և փաստաթղթեր՝ անհրաժեշտության դեպքում:

**4.1.11.2.** Արժեթղթերի սառեցման դադարեցումը կատարվում է Հաշվետիրոջ համապատասխան հանձնարարականի հիման վրա /հավելված 18 կամ, եթե լրացել է սառեցման համար սահմանված ժամկետը:

**4.1.11.3.** Արժեթղթերի սառեցման և դրա դադարեցման հանձնարարականը Բանկի կողմից ենթակա է կատարման վերջինիս կողմից այն ստացման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում:

**4.1.12. Բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովում քվեարկելու իրավունքի (այսուհետ՝ քվեարկելու իրավունք) ժամանակավոր սահմանափակումը՝ գրավադրված արժեթղթերի համար**

**4.1.12.1.** Քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակման նպատակով Հաշվետերը համապատասխան հանձնարարական է ներկայացնում Բանկին՝ նշելով ԱՄՏԾ-ն կամ ԱՆԾ-ն և արժեթղթերի քանակ, որոնց նկատմամբ պետք է կիրառվի ձայնի իրավունքի սահմանափակումը: Միաժամանակ գրավադրու կողմ հանդիսացող Հաճախորդը իր ՀՕ-ին է ներկայացնում քվեարկելու իրավունքի սահմանափակման համաձայնություն, եթե արժեթղթերը արդեն իսկ ծանրաբեռնված են գրավադրման հիմքով:

**4.1.12.2.** Այն դեպքում, երբ գրավատու և գրավադրու կողմերը քվեարկելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ համաձայնության են եկել արժեթղթերի գրավադրման գործառնությունը Համակարգում գրանցելու պահին, ապա քվեարկելու իրավունքի սահմանափակման գրառումը Համակարգում իրականացվում է՝ գրավադրման գործառնությունը գրանցելիս:

**4.1.12.3.** Քվեարկելու իրավունքի սահմանափակումը համարվում է դադարեցված արժեթղթերի գրավադրման դադարեցման գրանցմամբ կամ եթե նախապես նշվել է ժամկետ քվեարկելու իրավունքի սահմանափակման դադարեցման իրականացման համար: Այն դեպքում, երբ քվեարկելու իրավունքի սահմանափակման դադարեցման վերաբերյալ

|                     |   |                                 |                            |              |
|---------------------|---|---------------------------------|----------------------------|--------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                 | <b>Կոնֆիդենցիալ</b>        |              |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Ամսաթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>25/39</i> |

հանձնարարականը գրավատուի կողմից տրվել է ավելի վաղ, քան դրա գրավադրումը, ապա համակարգում գրանցվում է միայն գրավատուի գրավոր համաձայնության առկայության դեպքում:

**4.1.13. Համակարգում գործառնական ժամերը**

**4.1.13.1.** Կարգով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև հանձնարարականները Թողարկողների և Հաշվետերերի կողմից Բանկին կարող են ներակայացվել յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 09<sup>30</sup>-16<sup>00</sup>: Բանկի կողմից հանձնարարականների ներկայացումը ՀԿԴ, ինչպես նաև գրանցումը իրականացվում է 16<sup>00</sup>-17<sup>30</sup>: Բանկը Թողարկողներից և Հաշվետերերից ստացված հարցումների պատասխանները վերջիններիս կարող է տրամադել հարցման մեջ նշված օրվա դրությամբ՝ հաշվի առնելով և տեղեկացնելով Թողարկողին և Հաշվետիրոջը այն մասին, որ հարցման ներկայացման օրվա դրությամբ ժամը 10<sup>30</sup> ից մինչև ոչ ուշ, քան ժամը 15<sup>40</sup> ԿՇ-ի օպերատորի կանոններով սահմանված կարգով ցուցակված և առևտրի նպատակով արգելադրված արժեթղթերը կգտնվեն արժեթղթերի տեխնիկական հաշվին և չեն արտացոլվի Հաշվետիրոջ արժեթղթերի հաշվին:

**4.2. ԿՇ-ում կորպորատիվ արժեթղթերով գործարքների կնքման նպատակով հանձնարարականների կատարումը**

**4.2.1. Արժեթղթերով կնքված գործարքների քլիրինգի և վերջնահաշվարկի ՀԿԴ-ի կողմից իրականացման եղանակը և սկզբունքները**

**4.2.1.1.** ՀԿԴ-ն ԿՇ-ում արժեթղթերով կնքված գործարքների արդյունքում ծագած փոխադարձ պարտավորությունների որոշումը և հաշվանցումը կատարում է կենտրոնացված քլիրինգի եղանակով՝ զուտացման միջոցով:

**4.2.1.2.** ՀԿԴ-ն ԿՇ-ում արժեթղթերով կնքված գործարքների վերջնահաշվարկը իրականացնում է արժեթղթերի և դրամական միջոցների ամբողջական ապահովվածության եղանակով՝ առաքում վճարման դիմաց սկզբունքով:

**4.2.1.3.** ՀԿԴ-ն ԿՇ-ում արժեթղթերով կնքված գործարքների վերջնահաշվարկը իրականացնում է T+0 ժամանակահատվածում, որտեղ T-ն Կարգավորվող շուկայում գործարքի կնքման ամսաթիվն է, իսկ 0-ն գործարքի կնքման օրվան հաջորդող աշխատանքային օրերի թիվը:

**4.2.1.4.** Բանկը Կարգի, ինչպես նաև ՀԿԴ-ի հետ կնքած «Արժեթղթերի հաշվարկային և հաշվառման միասնական համակարգի անդամի կարգավիճակի» շնորհման Պայմանագրի (այսուհետ՝ նաև Պայմանագիր) համաձայն՝ Համակարգի ծառայությունների մատուցումը միջնորդավորում է այնքանով, որքանով դա հնարավոր է դարձնում Բանկի կողմից ԿՇ-ում արժեթղթերով գործառնությունների իրականացման նպատակով իր կամ իր Հաճախորդից ստացված հանձնարարականները կատարել:

**4.2.1.5.** Կարգով սահմանված հանձնարարականների կատարման նպատակով Բանկը ստանում է իրավասություն տվյալ արժեթղթերի հաշվով կատարել հետևյալ գործառնությունները

- 1) իր կամ իր Հաճախորդի արժեթղթերի հաշվում առկա արժեթղթերի առևտրային արգելադրում կամ դադարեցում;

|                     |   |                                  |                            |              |
|---------------------|---|----------------------------------|----------------------------|--------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                  | <b>Կոնֆիդենցիալ</b>        |              |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Ստանաթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>26/39</i> |

2) իր կամ իր Հաճախորդի հաշվին դրամական միջոցների դեպոնացում, ապադեպոնացում:

**4.2.1.6.** Առևտրային նստաշրջանի ավարտից մեկ ժամվա ընթացքում Բանկն իր հաճախորդին տրամադրում է հաշվետվություն արժեթղթերի հաշվի մնացորդի վերաբերյալ (արժեթղթերի հաշվից քաղվածք):

**4.2.1.7.** Բանկն առևտրային արգելադրման, առևտրային արգելադրման դադարեցման, ինչպես նաև դրամական միջոցների դեպոնացման համար անհրաժեշտ տվյալները մուտքագրում է Ծրագրային համակարգ համապատասխան հանձնարարականի ձևավորման միջոցով և հետագա քայլերը իրականացնում Ծրագրային համակարգի կողմից ստացված հաղորդագրություններին համապատասխան: Ծրագրային համակարգում հանձնարարականի ընդունումը կամ մերժումը հավաստիացվում է Ծրագրային համակարգի կողմից ձևավորված հաղորդագրությունների միջոցով: Վճարման հանձնարարականները և դրանց կատարումը հավաստող հաստատումները առաքվում են ՀՀ Կենտրոնական բանկի Էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով:

**4.2.1.8.** Քլիրինգի և վերջնահաշվարկի իրականացման համար Բանկը յուրաքանչյուր արժույթի համար ներկայացնում է 3 իրավասու դրամական հաշիվների համարներ, մեկը՝ սեփական գործարքների համար, մյուսը՝ հաճախորդների գործարքների համար և երրորդը Բանկի՝ որպես անվանատիրոջ, արժեթղթերի հաշվով կատարվելիք գործարքների համար (Հավելված 3):

**4.2.1.9.** Բանկը հանձնարարականները Ծրագրային համակարգ է մուտքագրում Կարգով սահմանված ձևով և ժամկետներում:

**4.2.1.10.** ՀԿԴ-ի կողմից վճարման հանձնարարականների կազմման ժամանակ տասնորդական լումաների առկայության դեպքում դրանք կլորացվում են 10 (տաս) Հայաստանի Հանրապետության լումայի ճշտությամբ, ընդ որում զրոյից մեծ տասնավորի դեպքում տասնավորը դառնում է զրո: Սույն կետով սահմանված գործողությունների կատարման դեպքում ՀԿԴ-ի առևտրային հաշվում մնացած լումաները ՀԿԴ-ն փոխանցում է իր հաշվարկային հաշիվներից որևէ մեկին: Ընդ որում, սույն կետով սահմանված գործողություններն իրականացվում են վերջնահաշվարկի փուլում:

**4.2.1.11.** Էլեկտրոնային վճարումների համակարգով փաստաթղթերը առաքվում են Էլեկտրոնային վճարումների համակարգի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի համաձայն: Ընդ որում.

- 1) ՍԻԲԻԷՆԵԹ համակարգչային ցանցով ուղղարկված փաստաթղթի ստացման պահ է համարվում փաստաթղթի առաքման անդորրագրում նշված ժամանակը;
- 2) Էլեկտրոնային վճարումների համակարգով ներկայացված փաստաթղթի դեպքում՝ «ՀՀ Կենտրոնական Բանկի Էլեկտրոնային վճարումների համակարգի» կողմից առաքումը հաստատող դրական անդորրագրի ձևակերպման ժամանակը;
- 3) Թղթային եղանակով ներկայացված փաստաթղթի դեպքում՝ փաստաթուղթը ստացող կողմի լիազորված աշխատակցին փաստաթղթի հանձնման պահը.
- 4) ՀԿԴ-ի և Կարգավորվող շուկայի Օպերատորի միջև սույն բաժնով սահմանված տեղեկությունների տրամադրում է համարվում վերջիններիս կողմից տրամադրվող տեղեկությունների ավտոմատ կերպով տեղակայումը վերջիններիս համար հասանելի



|                     |   |                                  |                            |              |
|---------------------|---|----------------------------------|----------------------------|--------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                  | <b>Կոնֆիդենցիալ</b>        |              |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Ստանաթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>27/39</i> |

միջավայրում:

**4.2.2. Երաշխիք**

**4.2.2.1.** ԿՇ-ում արժեթղթերով կնքված գործարքների վերջնահաշվարկի կատարման ապահովման նպատակով Բանկը մինչև առևտրային նստաշրջանի սկիզբը կամ առևտրային նստաշրջանի ընթացքում իրականացնում է.

1) Իր, իր՝ որպես անվանատիրոջ, կամ իր Հաճախորդի արժեթղթերի հաշիվներում այն արժեթղթերի առևտրային արգելադրումը, որոնցով Բանկը նախատեսում է իր կամ իր Հաճախորդի հաշվին վաճառքի գործառնություններ կատարել առևտրի ընթացքում: Սույն կետում նշված արժեթղթերի հաշիվներում արգելադրված արժեթղթերը հանդիսանում են Բանկի կողմից վաճառքի պարտավորությունների կատարման ապահովման միջոց:

2) Իր, իր՝ որպես անվանատիրոջ, կամ իր Հաճախորդի իրավասու դրամական հաշվից առևտրային հաշվին դրամական միջոցների այնպիսի ծավալի փոխանցում, որոնցով Բանկը նախատեսում է իր կամ իր Հաճախորդի հաշվին առքի գործառնություններ կատարել առևտրի ընթացքում: Առևտրային հաշվին փոխանցված դրամական միջոցները հանդիսանում են Բանկի կողմից գնման գործարքների կատարման ապահովման միջոց:

**4.2.3. Արժեթղթերի առևտրային արգելադրում և դրա դադարեցում**

**4.2.3.1.** Արժեթղթերի առևտրային արգելադրման իրականացման համար Բանկը Ծրագրային համակարգի համապատասխան բաժին է մուտքագրում հետևյալ տեղեկությունները.

- 1) Արժեթղթերի հաշվի համարը;
- 2) Արգելադրվող արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը;
- 3) Արժեթղթերի արգելադրման ենթակա քանակը;
- 4) Համապատասխան իրավասու դրամական հաշվի համարը (նշվում է այն արժույթով իրավասու դրամական հաշվի համարը, որով արտահայտված է արգելադրվող արժեթուղթը):

**4.2.3.2.** Բանկն արժեթղթերի նախնական դեպոնացման նպատակով առևտրային արգելադրման տվյալները ծրագրային համակարգ է մուտքագրում ոչ ուշ քան առևտրային օրվա 10:30-ը:

**4.2.3.3.** Ծրագրային համակարգը Բանկի կողմից մուտքագրված տվյալների հիման վրա ձևավորված առևտրային արգելադրման հանձնարարականում ներառված տեղեկությունները համեմատում է (ավտոմատ կերպով) ծրագրային համակարգում առկա նույնաբովանդակ տեղեկությունների հետ: Համեմատությունը կատարվում է՝ ըստ հանձնարարականների մուտքագրման հաջորդականության: Համեմատության արդյունքում ծրագրային համակարգը տեղեկացնում է Բանկին համապատասխան հաղորդագրության միջոցով արժեթղթերի առևտրային արգելադրման հանձնարարականում հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ: Բանկը հանդես եկած անհամապատասխանությունները ուղղում է արժեթղթերի նախնական դեպոնացման գրանցման համար ոչ ուշ քան առևտրային օրվա 10:30-ը:

**4.2.3.4.** Առևտրային օրվա 10:30ից հետո մուտքագրված առևտրային արգելադրման հանձնարարականի կատարումը ծրագրային համակարգի կողմից իրականացվում է արժեթղթերի լրացուցիչ դեպոնացման ձևով:

**4.2.3.5.** Արժեթղթերի առևտրային արգելադրումը դադարեցվում է.

|                     |   |                                  |                            |              |
|---------------------|---|----------------------------------|----------------------------|--------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                  | <b>Կոնֆիդենցիալ</b>        |              |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Ստանաթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>28/39</i> |

1) Բանկի կողմից ծրագրային համակարգ մուտքագրված արժեթղթերի առևտրային արգելադրման հանձնարարականի հիման վրա;

2) Կարգավորվող շուկայում առևտրի ընթացքում Բանկի կողմից արգելադրված արժեթղթերի ապադեպոնացման արդյունքում;

3) Կարգավորվող շուկայում առևտուր իրականացնելու Բանկի իրավունքը կասեցման կամ դադարեցման դեպքում;

4) Բանկի ԿՇՀՀԱԻ կարգավիճակի դադարեցման դեպքում;

5) ՀԿԴ-ն մինչև տվյալ առևտրային օրվա ժամը 10:10ը պետական իրավասու մարմինների կողմից ստացել է արգելանքի կամ սնանկության մասին համապատասխան որոշում: Սույն կետում նշված ժամից ուշ ստացված որոշումից բխող գործառնությունները կատարվում են առևտրային նստաշրջանի արդյունքների վերջնահաշվարկից հետո:

**4.2.3.6.** 4.2.3.5 կետով սահմանված հիմքերով (բացառությամբ 2) ենթակետի) արգելադրված արժեթղթերի արգելադրման դադարեցումը տվյալ օրվա առևտրային նստաշրջանի համար կատարվում է մինչև նույն առևտրային օրվա ժամը 10:30ը կամ Կարգավորվող շուկայում կնքված գործարքների վերջնահաշվարկն ավարտելուց հետո: 4.2.3.5 կետի 2) ենթակետով սահմանված դեպքում արժեթղթերի առևտրային արգելադրման դադարեցումն իրականացվում է առևտրային նստաշրջանի ընթացքում արժեթղթերի ապադեպոնացման իրականացման սույն բաժնում սահմանված ժամկետներում:

**4.2.3.7.** Ծրագրային համակարգում առևտրային արգելադրման դադարեցման հանձնարարականի կազմման համար Բանկն ընտրում է արգելադրումը դադարեցվող արժեթղթերի առևտրային արգելադրման համապատասխան հանձնարարականը:

1) Մուտքագրում է արժեթղթերի այն քանակը, որը պետք է մնա առևտրային արգելադրման կարգավիճակով՝ ոչ ամբողջական առևտրային արգելադրման դադարեցման դեպքում;

2) Իրականացնում է տվյալ հանձնարարականի չեղարկում՝ ամբողջական առևտրային արգելադրման դադարեցման դեպքում:

**4.2.3.8.** Ծրագրային համակարգը մուտքագրված տվյալները համեմատում է (ավտոմատ կերպով) Համակարգում առկա նույնաբովանդակ տեղեկությունների հետ: Համեմատությունը կատարվում է՝ ըստ հանձնարարականների ստացման հաջորդականության: Համեմատության արդյունքում ծրագրային համակարգը տեղեկացնում է Բանկին համապատասխան հաղորդագրության միջոցով արժեթղթերի առևտրային արգելադրման դադարեցման գրանցման կամ մերժման մասին՝ միաժամանակ տեղեկացնելով նաև մերժման պատճառի մասին: Բանկը հանդես եկած անհամապատասխանությունները ուղղում է ոչ ուշ քան առևտրային օրվա 10:30-ը կամ ԿՇ-ում կնքված գործարքների վերջնահաշվարկն ավարտելուց հետո:

**4.2.4. Դրամական միջոցների փոխանցումը նախնական դեպոնացման նպատակով**

**4.2.4.1.** ԿՇ-ում կնքված գործարքների վերջնահաշվարկի կատարման ապահովման նպատակով Բանկն անմիջապես, մինչև առևտրային նստաշրջանի սկիզբը իր իրավասու դրամական հաշիվներից ՀԿԴ-ի առևտրային հաշվին է փոխանցում (դեպոնացնում) ԿՇ-ում արժեթղթերի առևտրի համար նախատեսված դրամական միջոցները:

**4.2.4.2.** Դրամական միջոցների փոխանցումը ՀԿԴ-ի առևտրային հաշվին իրականացվում է ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացված համապատասխան հանձնարարականների հիման վրա:

|                     |   |                                 |                            |              |
|---------------------|---|---------------------------------|----------------------------|--------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                 | <b>Կոնֆիդենցիալ</b>        |              |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Սևսաթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>29/39</i> |

Հանձնարարականները ներկայացվում են էլեկտրոնային եղանակով, իսկ էլեկտրոնային եղանակով ներկայացման անհնարինության դեպքում՝ թղթային եղանակով:

**4.2.4.3.** Էլեկտրոնային եղանակով վճարման հանձնարարականները ներկայացվում են էլեկտրոնային վճարումների համակարգի ՀՏ 100, ՀՏ 202 (ՀՀ դրամի դեպքում) և ՀՏ203 (արտարժույթի դեպքում) հաղորդագրության միջոցով մինչև տվյալ առևտրային օրվա ժամը 10:10, որոնց կատարման դեպքում հաստատող համապատասխան ՀՏ 100 հաղորդագրություններն էլեկտրոնային եղանակով ուղարկվում են ՀԿԴ:

**4.2.4.4.** Թղթային եղանակով ներկայացված վճարման հանձնարարականի հիման վրա կամ եթե ՀԿԴ-ի առևտրային հաշվին դրամական միջոցներ են փոխանցվել ոչ իրավասու հաշվից, ՀԿԴ ուղարկված ՀՏ 202՝ նպատակ (70A), ՀՏ 100 և/կամ ՀՏ 203ի նպատակ (72) դաշտում պետք է նշվեն.

1) «P» տառը և դրանից անմիջապես հետո (առանց բացատների).

2) Այն իրավասու դրամական հաշվի համարը, որի միջոցների համար դեպոնացվում է գումարը:

«Նպատակ» համապատասխան դաշտում սույն կետի 1) և 2) ենթակետերով սահմանված նշումներից որևէ մեկի բացակայության կամ ցանկացած այլ տեղեկությունների և/կամ նշումների առկայության դեպքում ՀԿԴ-ին ուղարկված ՀՏ 100, ՀՏ 202 և/կամ ՀՏ 203ի ընդունումը մերժվում է, որի արդյունքում ՀԿԴ-ն նույն առևտրային օրվա ընթացքում պատրաստում և ՀՀ Կենտրոնական բանկ է ներկայացնում հետփոխանցման վճարման էլեկտրոնային հանձնարարականներ՝ ստացված միջոցները նույն հաշիվներին հետ փոխանցելու նպատակով: Եթե սույն կետով նշված դեպքում վճարող (50A) դաշտում լրացված հաշվի համարը իրավասու հաշվի համար է, ապա այն կոդիտարկվի որպես հաշվի համար, որի միջոցների համար դեպոնացվում է գումարը:

**4.2.4.5.** Բանկը դրամական միջոցների նախնական դեպոնացման նպատակով առևտրային հաշվին փոխանցված դրամական միջոցների վերաբերյալ ոչ ուշ քան առևտրային օրվա 10<sup>30</sup> ը Ծրագրային համակարգի համապատասխան հանձնարարականում մուտքագրում է հետևյալ տվյալները՝

1) Համապատասխան իրավասու դրամական հաշվի համարը;

2) Դրամական միջոցի արժույթը;

3) Դրամական միջոցների գումարը;

4) Արժեթղթերի հաշվի համարը:

**4.2.4.6.** Ծրագրային համակարգը ՀԿԴ-ի առևտրային հաշվին փոխանցված դրամական միջոցների վերաբերյալ տվյալները համեմատում է (ավտոմատ կերպով) Ծրագրային համակարգում առկա նույնաբովանդակ տեղեկությունների հետ: Համեմատությունը կատարվում է՝ ըստ հանձնարարականների ստացման հաջորդականության: Համեմատության արդյունքում Ծրագրային համակարգը տեղեկացնում է Բանկին համապատասխան հաղորդագրության միջոցով դրամական միջոցների դեպոնացումը հաջող կերպով կատարման, ինչպես նաև դրամական միջոցների դեպոնացման համապատասխան հանձնարարականում հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ: Դրամական միջոցների

|                     |   |                                  |                            |              |
|---------------------|---|----------------------------------|----------------------------|--------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                  | <b>Կոնֆիդենցիալ</b>        |              |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Ստանաթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>30/39</i> |

նախնական դեպոնացման նպատակով Բանկն ի հայտ եկած անհամապատասխանությունները ուղղում է ոչ ուշ քան առևտրային օրվա մինչև 1030ը:

**4.2.4.7.** Եթե տեխնիկական պատճառներով Բանկի էլեկտրոնային հանձնարարականները չեն ստացվել ՀՀ կենտրոնական բանկի կողմից, ապա Բանկը ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացնում թղթային հանձնարարականներ՝ նշելով վերջիններիս վրա «կրկնօրինակ», ինչը կբացառի միջոցների կրկնակի փոխանցումը ՀԿԴ-ի առևտրային հաշվին:

**4.2.4.8.** ՀԿԴ-ի կանոններով սահմանված դեպքերում և կարգով առևտրային նստաշրջանի հետաձգման ժամկետով հետաձգվում են նաև ԿՇՀՀԱ-ների կողմից արժեթղթերի և դրամական միջոցների նախնական դեպոնացման նպատակով ծրագրային համակարգ համապատասխան հանձնարարականների մուտքագրման, գրանցման, ինչպես նաև վճարման հանձնարարականները ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացման ժամկետները:

**4.2.5. Առևտրային նստաշրջանի ընթացքում արժեթղթերի լրացուցիչ դեպոնացում**

**4.2.5.1.** Բանկը առևտրային նստաշրջանի ընթացքում կարող է կատարել արժեթղթերի լրացուցիչ դեպոնացում 10:30-14:45-ն ընկած ժամանակահատվածում:

**4.2.5.2.** Արժեթղթերի լրացուցիչ դեպոնացման նպատակով Բանկը նույն առևտրային օրվա ժամը 10:30-ից մինչև ոչ ուշ, քան ժամը 14:45-ն Ծրագրային համակարգ է մուտքագրում արժեթղթերի առևտրային արգելադրման հանձնարարականները:

**4.2.5.3.** Ծրագրային համակարգը Բանկի կողմից մուտքագրված տվյալների հիման վրա ձևավորված առևտրային արգելադրման հանձնարարականում ներառված տեղեկությունները համեմատում է (ավտոմատ կերպով) Ծրագրային համակարգում առկա նույնաբովանդակ տեղեկությունների հետ: Համեմատությունը կատարվում է՝ ըստ հանձնարարականների մուտքագրման հաջորդականության: Համեմատության արդյունքում Ծրագրային համակարգը տեղեկացնում է Բանկին համապատասխան հաղորդագրության միջոցով արժեթղթերի առևտրային արգելադրման հանձնարարականում հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ: Բանկը հանդես եկած անհամապատասխանությունները կարող է ուղղել ոչ ուշ, քան առևտրային օրվա 14:45-ը:


**4.2.5.4.** Առևտրային օրվա 14:45-ից հետո մուտքագրված և ծրագրային համակարգի կողմից կատարված առևտրային արգելադրման հանձնարարականում ներառված տեղեկությունները ԿՇ են մտնում հաջորդ առևտրային օրը:

**4.2.6. Առևտրային նստաշրջանի ընթացքում դրամական միջոցների լրացուցիչ դեպոնացում**

**4.2.6.1.** Բանկը առևտրային նստաշրջանի ընթացքում կարող է կատարել դրամական միջոցների լրացուցիչ դեպոնացում 10:30-14:45-ն ընկած ժամանակահատվածում:

**4.2.6.2.** Դրամական միջոցների լրացուցիչ դեպոնացման նպատակով Բանկը առևտրային հաշվին փոխանցված դրամական միջոցների վերաբերյալ սույն բաժնի 4.2.4.5. կետով սահմանված տվյալները Ծրագրային համակարգ է մուտքագրում նույն առևտրային օրվա ժամը 10:30-14:45-ն ընկած ժամանակահատվածում:

**4.2.6.3.** Դրամական միջոցների լրացուցիչ դեպոնացման նպատակով էլեկտրոնային եղանակով վճարման հանձնարարականները ՀՀ Կենտրոնական Բանկ են ներկայացվում էլեկտրոնային վճարումների համակարգի ՀՏ 100, ՀՏ 202 (ՀՀ դրամի դեպքում) և/կամ ՀՏ203 (արտարժույթի դեպքում) հաղորդագրության միջոցով տվյալ առևտրային օրվա ժամը 10:10-

|   |  |                         |                    |       |
|---|--|-------------------------|--------------------|-------|
|  | «Կոնվերս Բանկ» ՓԲԸ   | PR 72-07                | Կոնֆիդենցիալ       |       |
|   | Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ | Սմասթիվ<br>22.05.2017թ. | Խմբագրություն<br>2 | 31/39 |

-14:25-ն, իսկ թղթային եղանակով՝ տվյալ առևտրային օրվա ժամը 10:00-14:15-ն ընկած ժամանակահատվածում, որոնց կատարման դեպքում կատարումը հաստատող համապատասխան ՀՏ 100, ՀՏ 202 (ՀՀ դրամի դեպքում) և/կամ ՀՏ203 (արտարժույթի դեպքում) հաղորդագրություններն էլեկտրոնային եղանակով անմիջապես ուղարկվում են ՀԿԴ-ին ոչ ուշ քան մինչև ժամը 14:45-ը:

**4.2.6.4.** Ծրագրային համակարգը ՀԿԴ-ի առևտրային հաշվին փոխանցված դրամական միջոցների վերաբերյալ տվյալները համեմատում է (ավտոմատ կերպով) Ծրագրային համակարգում առկա նույնաբովանդակ տեղեկությունների հետ: Համեմատությունը կատարվում է ըստ հանձնարարականների ստացման հաջորդականության: Համեմատության արդյունքում Ծրագրային համակարգը տեղեկացնում է Բանկին համապատասխան հաղորդագրության միջոցով դրամական միջոցների դեպոնացումը հաջող կերպով կատարման, ինչպես նաև դրամական միջոցների դեպոնացման համապատասխան հանձնարարականում հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ: Բանկը ի հայտ եկած անհամապատասխանությունները կարող է ուղղել ոչ ուշ, քան առևտրային օրվա 14:45ը:

**4.2.7. Քլիրինգի և վերջնահաշվարկի իրականացման փուլերը**

**4.2.7.1.** ՀԿԴ-ի կողմից քլիրինգի և վերջնահաշվարկի գործառույթը իրականացվում է հետևյալ փուլերով՝

- 1) Տեղեկությունների տրամադրում ԿԾ-ի Օպերատորին առևտրային նստաշրջանից առաջ և առևտրային նստաշրջանի ընթացքում;
- 2) Առևտրային նստաշրջանի ընթացքում դրամական միջոցների և արժեթղթերի ապադեպոնացման;
- 3) Առևտրային նստաշրջանի ավարտից հետո կնքված գործարքների վերաբերյալ տեղեկությունների ստացում ԿԾ-ի օպերատորից;
- 4) Առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված գործարքներից բխող պարտավորությունների և պահանջների քլիրինգ;
- 5) Միջոցների համեմատում;
- 6) Առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված գործարքների վերջնահաշվարկ:

**4.2.8. Կարգավորվող շուկայի Օպերատորի տեղաբաշխման համակարգի միջոցով արժեթղթերի տեղաբաշխումը**

**4.2.8.1.** Բանկը ԿԾ-ի օպերատորի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններ»ով սահմանված կարգով իր կամ այլ Թողարկողի կողմից թողարկված արժեթղթերը տեղաբաշխելու նպատակով սույն բաժնով սահմանված կարգով և ժամկետներում իրականացնում է արժեթղթերի առևտրային արգելադրում թողարկված արժեթղթերի հաշվին:

**4.2.8.2.** ԿԾ-ի տեղաբաշխման հարթակում արժեթղթերի տեղաբաշխումից հետո թողարկված արժեթղթերի հաշվում արգելադրված արժեթղթերի առկայության դեպքում Բանկը Ծրագրային համակարգում իրականացնում է առևտրային արգելադրման դադարեցում:

**4.2.8.3.** Դրամական միջոցների դեպոնացումը, ապադեպոնացումը, արժեթղթերով կնքված գործարքների քլիրինգը և վերջնահաշվարկը կատարվում է Կարգով և ՀԿԴ-ի կանոններով սահմանված ձևով և ժամկետներում:

|                     |   |                                  |                            |              |
|---------------------|---|----------------------------------|----------------------------|--------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                  | <b>Կոնֆիդենցիալ</b>        |              |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Ստանաթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>32/39</i> |

**4.2.8.4.** ԿՇ-ի օպերատորի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններ»-ով սահմանված կարգով թողարկողի թողարկված արժեթղթերի տեղաբաշխումը Բանկի կողմից իրականացվում է Կարգով սահմանված ձևով և ժամկետներում:

**5. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**5.1. Պետական պարտատոմսերի պահառության ընդհանուր սկզբունքները**

**5.1.1.** Պետական պարտատոմսերի պահառության (ենթապահառության) ծառայությունների մատուցման (այդ թվում՝ Դեպո հաշվի բացման) համար նախապայման է հանդիսանում Հաշվետիրոջ (բացառությամբ օտարերկրյա անվանատերերի) բանկային (ընթացիկ) հաշվի առկայությունը, մասնավորապես Բանկում:

**5.1.2.** Համակարգում պետական պարտատոմսերի նկատմամբ սեփականության և պետական պարտատոմսերի պահառությունը կարգավորող իրավական ակտերով պարտադիր գրանցման(հաշվառման) ենթակա, այլ իրավունքների հաշվառումն իրականացվում է առանձնացված կարգով՝ այդ նպատակով Համակարգում բացված հաշիվների (ներառյալ՝ Դեպո հաշիվների) միջոցով: Հաշվետիրոջ պետական պարտատոմսերի Դեպո հաշիվները (ազատ, գրավադրված, արգելադրված (կալանված), գրավադրված արգելադրված) ավտոմատ ձևավորվում են Ծրագրային համակարգում՝ Հաշվետիրոջ համար Համակարգում հաշիվ բացելու ժամանակ:

**5.1.3.** Համակարգում առանձին հաշվառման են ենթակա Հաշվետիրոջը սեփականության իրավունքով պատկանող պետական պարտատոմսերն այն պետական պարտատոմսերից, որոնք սեփականատեր չհանդիսացող անձը օգտագործում, տիրապետում կամ տնօրինում է օրենքով սահմանված իրավասության կամ սեփականատիրոջ հետ կնքված հանձնարարության, գործակալության, կոմիսիայի, հավատարմագրային կառավարման պայմանագրի հիման վրա: Առանձին հաշվառման են ենթակա նաև այն պետական պարտատոմսերը, որոնց նկատմամբ իրավունքները սահմանափակված են:

**5.1.4.** Համակարգի միջոցով Պետական պարտատոմսերով սահմանված, ինչպես նաև այդ պարտատոմսերով գործարքների հետ կապված իրավունքներն ու պարտականությունները ծագում են, իսկ այդ իրավունքների փոխանցումը, վերապահումը և սահմանափակումն իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկի՝ որպես պահառուի, և/կամ Կենտրոնական դեպոզիտարիայի՝ որպես ենթապահառուի, մոտ վարվող հաշիվներում համապատասխան գրառում անելուց հետո:

**5.1.5.** ՀԿԴ-ն (Բանկը) Հաշվետիրոջ պետական պարտատոմսերով գործառնություններ կարող է իրականացնել միայն պետական պարտատոմսերի շրջանառությունը կարգավորող իրավական ակտերով, Կանոններով, ինչպես նաև ՀԿԴ-ի և ՀՀ կենտրոնական բանկի միջև կնքված պայմանագրերով սահմանված գրավոր, այդ թվում՝ նաև էլեկտրոնային կարգադրությունների հիման վրա: Որպես կարգադրություն կարող են հանդիսանալ հետևյալ փաստաթղթերը.

**5.1.5.1.** պետական պարտատոմսերի նկատմամբ իրավունքներ ունեցող անձի կամ նրա լիազորած անձի կողմից՝ սահմանված ձևով լրացված և ներկայացված Դեպո հանձնարարականները, ինչպես նաև պետական պարտատոմսերի շրջանառությունը



|                     |   |                                 |                            |              |
|---------------------|---|---------------------------------|----------------------------|--------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                 | <b>Կոնֆիդենցիալ</b>        |              |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Սմասթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>33/39</i> |

կարգավորող իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ այդ իրավունքները հավաստող այլ փաստաթղթերը.

**5.1.5.2.** դատական վճռի հիման վրա Արժեթղթերի նկատմամբ իրավունքների սահմանափակման, փոխանցման, դադարեցման գործառնությունների կատարմանդեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատական ակտերը և/կամ ԴԱՀԿ որոշումները:

**5.1.6.** Դեպո հանձնարարականները ներկայացվում են թղթային, էլեկտրոնային կամ ֆաքսիմիլային եղանակով: Դեպո հանձնարարականների ներկայացման եղանակը ներկայացվում է Հաճախորդի քարտում: Դեպո հանձնարարականի ձևը կարող է կախված լինել մատուցվող ծառայության տեսակից: Դեպո հանձնարարականը պետք է պատշաճ վավերացված լինի Հաշվետիրոջ (իրավասու անձի) կողմից:

**5.1.7.** Անհրաժեշտության դեպքում Բանկը կարող է Հաշվետիրոջից պահանջել լրացուցիչ փաստաթղթեր:

**5.1.8.** Հանձնարարական ներկայացրած հաճախորդները կարող են հեռախոսով Բանկից ստանալ նախնական տեղեկատվություն իրենց կողմից ներկայացված Դեպո հանձնարարականների կատարման վերաբերյալ՝ դիմելով Բանկի համապատասխան աշխատակցին:

**5.1.9.** ՀՀ կենտրոնական բանկից հանձնարարականի կատարման վերաբերյալ ստացված հաստատումը հավաստում է, որ ՀՀ կենտրոնական բանկի Դեպո հաշվառման համակարգում կատարվել է համապատասխան գրառում՝ պետական պարտատոմսերով հավաստված իրավունքների ամրագրման, փոխանցման, դադարեցման, վերապահման կամ սահմանափակման վերաբերյալ:

**5.1.10.** ՀՀ կենտրոնական բանկից ստացված հաստատումը հիմք է հանդիսանում Բանկի համար՝ իր մոտ Հաշվետիրոջ հաշվում համապատասխան գրառում կատարելու համար:

**5.1.11.** Դեպո հանձնարարականի կատարման վերաբերյալ հաստատումը ստանալուց հետո Բանկը Ծրագրային համակարգում Հաշվետիրոջ հաշվում կատարում է համապատասխան գրառում: Ծրագրային համակարգի խափանման դեպքում գրառումները կարող են կատարվել անմիջականորեն Բանկի համապատասխան աշխատակիցների կողմից:

**5.1.12.** Դեպո հանձնարարականը ենթակա է կատարման ոչ ուշ, քան դրա տրմանը հաջորդող 2-րդ աշխատանքային օրը: Վերջինիս չբավարարման դեպքում Դեպո հանձնարարականը հանվում է և Բանկի կողմից կազմվում է գործառնության չկատարման վերաբերյալ հաշվետվություն, որը ներկայացվում է Հաշվետիրոջը:

**5.1.13.** Բանկը մերժում է ներկայացված Դեպո հանձնարարականի ընդունումը (գործառնության կատարումը), եթե՝

**5.1.13.1.** հանձնարարականը չի բավարարում նրա ձևին ներկայացվող պահանջներին.

**5.1.13.2.** հանձնարարականը առաջ է բերում հիմնավոր կասկածներ՝ օրինական լինելու հարցում.

**5.1.13.3.** հանձնարարականի կատարումը կհանգեցնի ՀՀ օրենսդրության պահանջների խախտմանը.

**5.1.13.4.** Հաշվետիրոջ Դեպո հաշվի կարգավիճակը թույլ չի տալիս կատարել նշված գործառնությունը.

|                     |   |                                  |                            |              |
|---------------------|---|----------------------------------|----------------------------|--------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                  | <b>Կոնֆիդենցիալ</b>        |              |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Ստանաթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>34/39</i> |

**5.1.13.5.** պետական պարտատոմսերի քանակը և կարգավիճակը (պետական պարտատոմսերի ծանրաբեռնումը երրորդ անձանց իրավունքով, գրավադրում և այլն) թույլ չի տալիս կատարել նշված գործառնությունը.

**5.1.13.6.** հանձնարարականը թույլ չի տալիս նույնականացնել պետական պարտատոմսերը.

**5.1.13.7.** հանձնարարականի հետ ներկայացված չեն անհրաժեշտ փաստաթղթերը.

**5.1.13.8.** հանձնարարականի ներկայացմանը հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում ի հայտ չեն եկել այն հանգամանքները, որի դեպքում հնարավոր կդառնար կատարել հանձնարարականը.

**5.1.13.9.** Հաշվետիրոջը պահառության ծառայությունների մատուցումը կասեցված է Բանկի սակագների կանոններով սահմանված կարգով.

**5.1.13.10.** այլ հիմնավոր պատճառների առկայության դեպքում:

**5.1.14.** Դեպո հանձնարարականի մերժումը Հաշվետիրոջ պահանջով կարող է կատարվել գրավոր ձևով՝ նշելով մերժման պատճառները:

**5.1.15.** Բանկի կողմից գրավոր ձևով մերժված Դեպո հանձնարարականը չի կարող հանդիսանալ պահառության գործառնությունների կատարման հիմք:

**5.1.16.** Բացի վերը նշված սկզբունքներից՝ Բանկը պետական պարտատոմսերի պահառուական ծառայություններ մատուցելիս առաջնորդվում է ՀԿԴ կանոններով սահմանված պետական պարտատոմսերի պահառության սկզբունքներով:

**5.2. Պետական պարտատոմսերով գործառնությունների վերաբերյալ տեղեկանքների, քաղվածքների, հաշվետվությունների տրամադրումը**

**5.2.1.** Պետական պարտատոմսերով գործառնություն կատարելիս հաճախորդին կամ նրա լիազորված ներկայացուցչին Բանկի կողմից տրամադրվում է հաշվետվություն՝ ներկայացված Դեպո հանձնարարականների կատարման վերաբերյալ, այդ հանձնարարականը կատարելուց հետո մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը:

**5.2.2.** Սույն գլխով չսահմանված դեպքերում Համակարգից քաղվածքների, հաշվետվությունների և տեղեկանքների տրամադրումը կատարվում է քաղվածքների, հաշվետվությունների և տեղեկանքների տրամադրման ընդհանուր կարգով:

**5.2.3.** Դեպո հաշվում յուրաքանչյուր շարժի դեպքում շարժից հետո մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտն ընկած ժամանակահատվածում Բանկը հաճախորդին տրամադրում է վերջինիս պատականող պետական պարտատոմսերի վերաբերյալ տեղեկանքներ:

**5.2.4.** Հաճախորդ-գրավառու ունենալու դեպքում Բանկը գրավառուի օգտին պետական պարտատոմսերի գրավադրումից հետո, մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտն ընկած ժամանակահատվածում, հաճախորդին տրամադրում է վերջինիս օգտին գրավադրված պետական պարտատոմսերի վերաբերյալ տեղեկանք:

**5.2.5.** Արժեթղթերի հաշվից քաղվածքները, պետական պարտատոմսերով կատարված գործառնությունների վերաբերյալ հաշվետվությունները, հաճախորդին պատկանող պետական պարտատոմսերի և հաճախորդ-գրավառուի օգտին գրավադրված պետական պարտատոմսերի վերաբերյալ տեղեկանքները տրամադրվում են թղթային, էլեկտրոնային կամ ֆաքսիմիլային եղանակով:

|                     |   |                                 |                            |              |
|---------------------|---|---------------------------------|----------------------------|--------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                 | <b>Կոնֆիդենցիալ</b>        |              |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Սևասթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>35/39</i> |

**5.2.6.** Արժեթղթերի հաշվի փակման և պահառության պայմանագրի լուծման առանձնահատկությունները պետական պարտատոմսերի պահառության դեպքում:

**5.2.7.** Եթե Հաշվետերը ցանկանում է Բանկի հետ լուծել պահառության պայմանագիրը և փակել արժեթղթերի հաշիվը, որում պետական պարտատոմսեր են հաշվառված, ապա Հաշվետերը պարտավոր է այդ մասին Բանկին տեղեկացնել առնվազն 20 (քսան) աշխատանքային օր առաջ և առաջնորդվել Կարգով սահմանված դրույթներով:

**5.2.8.** Արժեթղթերի հաշվի փակման ցանկության դեպքում, եթե նրանում պետական պարտատոմսեր են հաշվառված, Բանկը գրավոր ծանուցում է Հաշվետիրոջը՝ պետական պարտատոմսերն այլ Հաշվի Օպերատորի մոտ բացված հաշվում պորտֆելի փոխանցման հանձնարարականի ներկայացման անհրաժեշտության մասին:

**5.2.9.** Եթե Հաշվետերը ցանկանում է Բանկի հետ լուծել պահառության պայմանագիրը և մինչև ժամանակ չի ներկայացնում այլ Հաշվի Օպերատորի մոտ բացված հաշվում պորտֆելի փոխանցման հանձնարարական, ապա Բանկը պահառության պայմանագիրը լուծելուց առնվազն 10 (տասը) աշխատանքային օր առաջ ծանուցում է Հաշվետիրոջը՝ վերջինիս հաշվում առկա պետական պարտատոմսերի պետական պարտատոմսերը պահառության ծառայություններ մատուցող այլ անձի մոտ բացված հաշվին փոխանցելու հանձնարարական ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

**5.2.10.** Հաշվետիրոջ կողմից, իր արժեթղթերը պահառության ծառայություն մատուցող այլ անձին պահառության հանձնելու նպատակով, «Արժեթղթերի ազատ առաքման» հանձնարարական չներկայացվելու դեպքում՝ Բանկն իրավասու է չլուծել պահառության պայմանագիրը:

## **6. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԵՆԹԱՊԱՀԱՌՈՒԹՅՈՒՆԸ**

**6.1.** Բանկը միջնորդավորում է ՀԿԴ կողմից իրականացվող օտարերկրյա արժեթղթերի պահառության (ենթապահառության) ծառայությունը՝ Հաշվետերերից համապատասխան հանձնարարականներ ընդունելով և փոխանցելով ՀԿԴ-ին:

**6.2.** Հաշվետերն իր արժեթղթերի հաշվում հաշվառվող կամ հաշվառման ենթակա արժեթղթերով ՀԿԴ կանոններով նախատեսված գործառնությունների իրականացման նպատակով՝ Բանկին է ներկայացնում Կարգով սահմանված հանձնարարականները, որոնք Բանկը փոխանցում է ՀԿԴ-ին՝ Ծրագրային համակարգում մուտքագրման միջոցով: Այն պարագայում, երբ հանձնարարականի փոխանցումը հնարավոր չէ իրականացնել Ծրագրային համակարգում մուտքագրման միջոցով, ապա հանձնարարականը Բանկը ՀԿԴ-ին ներկայացնում է թղթային եղանակով: Հաշվետերը Բանկին է ներկայացնում նշված հանձնարարականով նախատեսված գործառնության համար ՀԿԴ կանոններով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև ՀԿԴ-ի հետ պայմանագիր կնքած Օտարերկրյա պահառուի կողմից պահանջվող այլ փաստաթղթեր:

**6.3.** ՀԿԴ-ի կողմից ներկայացված հանձնարարականների կատարման վերաբերյալ Օտարերկրյա պահառուի կողմից տեղեկատվության ներկայացումից հետո (եթե դա նախատեսված է Օտարերկրյա պահառուի կանոններով և/կամ Օտարերկրյա պահառուի և ՀԿԴ-ի միջև կնքված պայմանագրով), ՀԿԴ-ն հանձնարարականի կատարման վերաբերյալ

|                     |   |                                 |                            |              |
|---------------------|---|---------------------------------|----------------------------|--------------|
| <b>ConverseBank</b> | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b>   | <b>PR 72-07</b>                 | <b>Կոնֆիդենցիալ</b>        |              |
|                     | <b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <i>Սմասթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>36/39</i> |

գրառում է կատարում Համակարգում կամ այլ եղանակով տեղեկացնում Բանկին: Բանկը պարտավոր է գործառնության կատարման վերաբերյալ առավելագույնը հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել Հաշվետիրոջը:

**6.4.** Հաշվետերը՝ իր հաշվում առկա օտարերկրյա արժեթղթերի մնացորդի, ինչպես նաև արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման նպատակով դիմում է Բանկին: Բանկը Հաշվետիրոջ դիմումի հիման վրա վերջինիս տրամադրում է Կարգով սահմանված հաշվետվությունները (քաղվածք, տեղեկանք): Նշված հաշվետվությունները Բանկը ստանում է Համակարգում համապատասխան հարցում կատարելու միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ Բանկը տեղեկատվության ստացման նպատակով գրավոր դիմում է ներկայացնում ՀԿԴ, որին ՀԿԴ-ն պատասխանում է իր կանոններով սահմանված կարգով:

**6.5.** Հաշվետերն իրավասու է օտարերկրյա արժեթղթերի ենթապահառության վերաբերյալ համաձայնագրով սահմանված կարգով Բանկից պահանջել նաև այլ հաշվետվություններ և/կամ տեղեկություններ, եթե դրանք սահմանված են Օտարերկրյա պահառուի և ՀԿԴ-ի միջև կնքված պայմանագրով:


**6.6.** Այն դեպքում, երբ Բանկի կողմից տեղեկատվության տրամադրումն իրականացվում է կապի այնպիսի եղանակներով, ինչպիսին են ֆաքսիմիլային կապը, էլեկտրոնային փոստը և այլն, ապա այդ տեղեկություններին երրորդ անձանց հնարավոր հասանելիության համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

**7. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

**7.1.** Բանկի գործողությունների վերաբերյալ բողոքների ներկայացման իրավունք ունեն Թողարկողները և/կամ Հաշվետերերը՝ իրենց խախտված իրավունքների մասով:

**7.2.** Թողարկողը և/կամ Հաշվետերը, ում կարծիքով Բանկի կողմից խախտվել է իր իրավունքը, իրավունք ունի խախտման վերաբերյալ բողոք ներկայացնել ՀԿԴ-ին՝ խախտման տեղի ունենալու կամ խախտման մասին իրեն հայտնի դառնալու պահից 3 (երեք) ամսվա ընթացքում:

**7.3.** Բողոքը ներկայացվում է գրավոր՝ հստակ հիմնավորելով դրանում նշված փաստերը և կցելով համապատասխան գրավոր ապացույցներ:

|   |  |                                 |                            |             |
|---|--|---------------------------------|----------------------------|-------------|
|  | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b><br>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի<br>հաշվարկային համակարգի անդամի<br>կարգավիճակներով իրականացվող<br>ծառայությունների մատուցման կարգ | PR 72-07                        | Կոնֆիդենցիալ               |             |
|   | <b>Հավելված 1</b><br>Ընթացիկ գործունեության ստուգման<br>արդյունքների մասին հաշվետվություն  | <i>Ամսաթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>1/39</i> |

**Հաշվետվություն  
ընթացիկ գործունեության ստուգման արդյունքների մասին**

**Ստուգման ժամանակահատվածը.**(օր/ամիս/տարի) **մինչև Ստուգման  
իրականացման ժամանակահատվածը.** (օր/ամիս/տարի) **մինչև -  
Ստուգման մասնակցած ներքին աուդիտի անդամները (ԱԱ)**

1. -----
2. -----
3. -----
4. -----

**Ստուգման արդյունքները.**

1. Համակարգի Անդամի կողմից ծառայությունները մատու ցվել են բացառապես «Արժեթղթերի շու կայ ի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր պայ մանագրի հիման վրա.

այո      ոչ

Եթե առկա են խախտում(ներ), ապա դրա(նց) իրավական հիմքերը և բնույթը,

-----

2. Համակարգի Անդամը իր հաճախորդին տեղեկացրել է ներդրողների պաշտպանության գործող մեխանիզմների մասին

այո      ոչ

Եթե առկա են խախտում(ներ), ապա դրա(նց) իրավական հիմքերը և բնույթը,


-----

3. Համակարգի Անդամը վարում է առանձնացված հաշվառում յուրաքանչյուր հաճախորդի, ինչ պես նաև իր և իր հաճախորդների միջոցների համար.

այո      ոչ

Եթե առկա են խախտում(ներ),ապա դրա(նց) իրավական հիմքերը և բնույթը,

-----

|   |   |                                 |                            |      |
|---|---|---------------------------------|----------------------------|------|
|  | <p align="center"><b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b></p> <p align="center"><b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի<br/>հաշվարկային համակարգի անդամի<br/>կարգավիճակներով իրականացվող<br/>ծառայությունների մատուցման կարգ</b></p> | PR 72-07                        | Կոնֆիդենցիալ               |      |
|   | <p align="center"><b>Հավելված 1</b></p> <p align="center">Ընթացիկ գործունեության ստուգման<br/>արդյունքների մասին հաշվետվություն</p>   | <i>Ամսաթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | 2/39 |

4. Համակարգի Անդամի մոտ«Բանկերի, վարկայ ին կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության հիմքեր առկան առկա չեն

Եթե առկա են, ապանշել հիմքերը, դրանց վերացմանուղղությամբ տարվող միջոցառումները

-----

5. Ներքինաուղիտիկոդմիցնախորդստուգմանարդյունքում սույն հաշվետվությամբ նշված խախտման (խախտումների առկայության դեպքում) վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների նկարագրությունը և խախտման վերացման կամ դրա նվազեցման փաստի առկայությունը.

« \_\_\_\_\_ »  
(Համակարգի անդամի անվանումը)


/ \_\_\_\_\_ // \_\_\_\_\_ /

Ներքին աուղիտի ստորաբաժանման ղեկավար (Ա.Հ.Ա.) ստորագրություն

**Կ.Տ.**

Լրացման ամսաթիվ (օր/ամիս/տարի)



|   |  |                                 |                            |             |
|---|--|---------------------------------|----------------------------|-------------|
|  | <b>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</b><br><b>Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակներով իրականացվող ծառայությունների մատուցման կարգ</b> | <b>PR 72-07</b>                 | <b>Կոնֆիդենցիալ</b>        |             |
|   | <b>Հավելված 2</b><br><b>Հիմնական տվյալների վերաբերյալ տեղեկանք</b>   | <i>Ամսաթիվ<br/>22.05.2017թ.</i> | <i>Խմբագրություն<br/>2</i> | <i>1/39</i> |

**Հիմնական տվյալների վերաբերյալ տեղեկանք**

|   |  |
|---|--|
| Լրիվ հայերեն անվանումը՝ հիմնադիր փաստաթղթերին համապատասխան (առկայության դեպքում նաև ռուսերեն և անգլերեն լեզուներով) |  |
| Գրանցման համարը, ամսաթիվը (օր/ամիս/տարի) և գրանցման երկիրը  |  |
| Փոստային հասցեն (գործունեության վայրը)  |  |
| Հեռախոսը, ֆաքսը   |  |
| ՍիԲիԷյՆԵթ համակարգչային ցանցի իրավասու էլեկտրոնային հասցե կամ այլ իրավասու էլեկտրոնային հասցե                       |  |
| Ինտերնետային կայքի հասցե  |  |
| Հեռացված տերմինալի ՍիԲիԷյՆԵթ համակարգչային ցանցի և ինտերնետ ցանցի իրական IP հասցեն                                  |  |
| Իրավասու աշխատակցի ԱՀԱ-ն, պաշտոնը և ստորագրությունը   |  |
| Համակարգի անդամի շուկայական հապավումը   |  |

**Իրավասու դրամական հաշիվներ**

|  |  |
|--|--|
| Համակարգի Անդամի՝ DVP գործառնության իրականացման համար նախատեսված, դրամական միջոցների հաշվի համարը <sup>1</sup>   |  |
| Հաշվարկային գործակալի/Համակարգի Անդամի անվանումը և վերջինիս մոտ Համակարգի Անդամի սեփական դրամական միջոցների (ՀՀ դրամով և/կամ արտարժույթով) հաշվի համարը*   |  |
| Հաշվարկային գործակալի/ Համակարգի Անդամի անվանումը և վերջինիս մոտ Համակարգի Անդամի կողմից հաճախորդների դրամական միջոցների (ՀՀ դրամով և/կամ արտարժույթով) հաշվի համարը*  |  |
| Հաշվարկային գործակալի/Համակարգի Անդամի անվանումը և վերջինիս մոտ Համակարգի Անդամի՝ անվանատիրոջ դրամական միջոցների (ՀՀ դրամով և/կամ արտարժույթով) համար բացված հաշվի համարը (եթե այն տարբեր է հաճախորդների դրամական միջոցների համար բացված հաշվի համարից)* |  |

Լրացման ամսաթիվը , \_\_\_\_\_, \_\_\_\_\_ 20\_\_ թ. Կ.Տ.

**Համակարգի Անդամի գործադիր մարմնի ղեկավարի ԱՀԱն և պաշտոնը ստորագրությունը**

<sup>1</sup> Լրացվում է միայն Հաշվի Օպերատոր հանդիսացող Համակարգի Անդամի կողմից

\* Լրացվում է միայն ԿՇՀՀԱ հանդիսացող Համակարգի Անդամի կողմից